

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА
АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE
JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 2

ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2020

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ**

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**
խմբագրական խորհուրդ՝

Արման Եղիազարյան (խմբագիր, պ.գ.դ., պրոֆ.), **Արամ Սիմոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Զուգասյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.), **Տիգրան Գևորգյան** (պ.գ.թ.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**

Редакционная коллегия:

Арман Егиазарян (редактор, д.и.н., проф.), **Арам Симонян** (директор Института Арменологических исследований ЕГУ, членкор. АН РА, д.и.н., проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Айрапет Маргарян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсисян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Напетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., доц.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.), **Тигран Геворгян** (к.и.н.).

Editor-in-Chief - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**

Editorial Board:

Arman Yeghiazaryan (editor, Doctor of Sciences, prof.), **Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences, associate prof.), **Hovik Grigoryan** (PhD in History, associate prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD in History, associate prof.), **Edgar Hovhannisyan** (PhD in History, associate prof.), **Tigran Gevorgyan** (PhD in History).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Սեյրան Չաքարյան - ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅՈՒ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ, ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ԵՎ ԻՄԱՍՏԱՍԻՐՄԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՅՈՒՐԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	8
Сейран Закарян - ИСТОЧНИКИ ФИЛОСОФИИ ГРИГОРА ТАТЕВАЦИ, ЕГО ИДЕИ И СПЕЦИФИКА ЕГО СПОСОБА ФИЛОСОФСТВОВАНИЯ.....	16
Seyran Zakaryan - GRIGOR TATEVATSI'S PHILOSOPHICAL SOURCES, IDEAS AND PECULIARITIES OF THE WAY OF PHILOSOPHIZING.....	17
Հասմիկ Ամիրջանյան - ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՅՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳԵԿՈՐ-ՎԱՐՉԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ.....	19
Асмик Амирджанян - ДУХОВНО-АДМИНИСТРАТИВНАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ГУКАСА КАРНЕЦИ.....	27
Hasmik Amirjanyan - ADMINISTRATIVE-SPIRITUAL ACTIVITIES OF GHUKAS KARNETSI.....	28
Վարդան Միսիրջանյան, Գոհար Ղամբարյան - ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ. ՍԵՎԱՆԼԱ ԼՅԻ ԱՎԱԶԱՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ XIX ԴԱՐԻ 30-ԱՎԱՆՆԵՐԻՆ.....	29
Вардан Мхитарян, Гоар Гамбарян - ИНФОРМАЦИОННАЯ ВОЙНА: НАСЕЛЕННЫЕ ПУНКТЫ БАСЕЙНА ОЗЕРА СЕВАН В 30-Х ГОДАХ XIX ВЕКА.....	39
Vardan Mkhitaryan, Gohar Ghambaryan - INFORMATION WAR: SETTLEMENTS OF THE LAKE SEVAN BASIN IN THE 30s of XIX.....	39
Լիլիթ Մակարյան - ԱՊԱՐԱՆԻ ՎԱՐԴԵՆԻՍ ԳՅՈՒՂԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԵՎ ՏԵՂԻ ԵՎԵՂԵՑԻՆԵՐԻ ԱՆՎԱՆ ԵՇԳՐՏՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐԶ.....	45
Лилит Макарян - К ВОПРОСУ О ПЕРЕСЕЛЕНИИ СЕЛА ВАРДЕНИС АПАРАНА И УТОЧНЕНИИ НАЗВАНИЙ МЕСТНЫХ ЦЕРКВЕЙ.....	49
Lilit Makaryan - ON RESETTLEMENT ISSUE OF VARDENIS VILLAGE OF APARAN AND NAME CLARIFICATION OF LOCAL CHURCHES.....	49
Ֆելիքս Մովսիսյան - ՌՈՒՄԱՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ XIX ԴԱՐԻ ԻՏԱԼԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ.....	50
Феликс Мовсисян - ПЕРИОДИЧЕСКАЯ ПЕЧАТЬ РОССИЙСКИХ АРМЯН ОБ ИТАЛЬЯНСКОЙ НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЕ XIX ВЕКА.....	66
Felix Movsisyan - ARMENIAN PERIODICALS OF RUSSIA ON THE 19TH CENTURY NATIONAL STRUGGLE OF ITALY.....	67
Սուսաննա Առաքելյան - ԲԱՔԿԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ-ԼՈՒՄԱՎՈՐԱԿԱՆ ԵՎ ԴՊՐՈՑԱՍՏԵՂԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1864-1896 ԹԹ.....	69

Сусанна Аракелян – ОБРАЗОВАТЕЛЬНО-ПРОСВЕТИТЕЛЬСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНСКОГО ГУМАНИТАРНОГО ОБЩЕСТВА БАКУ И СТРОИТЕЛЬСТВО ШКОЛ В 1864-1896.	87
Susanna Arakelyan – EDUCATIONAL AND SCHOOL-BUILDING ACTIVITIES OF ARMENIAN HUMANITARIAN SOCIETY OF BAKU IN 1864-1896.	87
Գեղամ Բաղայան – ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱԽՕՐԵԻՆ [Սևերակի, Ջերմուկի, Միդիատի, Մծբինի (Նիսիբին) և Վերանշեհիրի գավառները].....	88
Гегам Бадалян – ИСТОРИКО-НАРОДНОЕ ОПИСАНИЕ ЗАПАДНОЙ АРМЕНИИ НАКАНУНЕ ГЕНОЦИДА АРМЯН (Северакский, Джермукский, Мидиатский, Мцбинский (Нисибинский) и Вераншехирский уезды).	115
Gegham Badalyan – HISTORICAL-NATIONAL DESCRIPTION OF WESTERN ARMENIA ON THE EVE OF THE ARMENIAN GENOCIDE (provinces Severak, Jermuk, Midiat, Mtsbin (Nisibin) and Veranshehir).	115
Աննա Վարդանյան – ԴԻԱՆԱ ԱԲԳԱՐ. ՀԱՅ-ԵԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ	117
Анна Варданян – ДИАНА АБГАР - «МАТЬ АРМЕНИИ НА ДАЛЬНЕМ ВОСТОКЕ»: ЖИЗНЬ И ДЕЯТЕЛЬНОСТЬ. ПО СЛЕДАМ ИСТОКОВ АРМЯНО-ЯПОНСКИХ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ ОТНОШЕНИЙ.	123
Anna Vardanyan – DIANA ABGAR - “MOTHER OF ARMENIA IN THE FAR EAST”: LIFE AND ACTIVITIES. TRACING BACK TO ARMENIAN-JAPANESE HISTORICAL AND CULTURAL RELATIONS.	124
Գայանե Հովհաննիսյան – ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱԿԱՐ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ 1926 Թ. ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ	125
Гаяне Оганнисян – НАСЕЛЕНИЕ НАГОРНО-КАРАБАХСКОЙ АВТОНОМНОЙ ОБЛАСТИ ПО ВСЕСОЮЗНОЙ ПЕРЕПИСИ 1926 г.	132
Gayane Hovhannisyan – POPULATION OF THE NAGORNO-KARABAKH AUTONOMOUS REGION ACCORDING TO THE ALL-UNION CENSUS (1926).	133
Արտակ Խաչատրյան – ԲՈՆԵՎԻԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻՆ ՆԱԽԱԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ.....	134
Артак Хачатрян – НАЦИОНАЛЬНЫЙ ВОПРОС В ВОСПРИЯТИИ БОЛЬШЕВИСТСКОЙ ПАРТИИ В ДОСОВЕТСКИЙ ПЕРИОД (1903-1917 гг.).....	141
Artak Khachatryan – NATIONAL ISSUE IN THE PERCEPTIONS OF THE BOLSHEVIK PARTY IN THE PRE-SOVIET PERIOD (1903-1917).	141
Մանյակ Երանոսյան – ՀԱԿՈԲ ԶԱՎՐԻՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԶՐՈՒՄՈՒՄ (1916 Թ. ՀՈՒՆԻՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ)	142
Маняк Ераносян – ДЕЯТЕЛЬНОСТЬ ЯКОВА ЗАВРИЯНА В ЭРЗРУМЕ (ИЮЛЬ-СЕНТЯБРЬ 1916 Г.).....	149
Manyak Yeranosyan – НАКОВ ZAVRIYAN'S ACTIVITIES IN ERZRUM (1916 JULY-SEPTEMBER).	150

Գևորգ Կեսոյան – ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐԹԻՎ – ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՍԱՀՄԱՆԻՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ.....	151
Геворг Кесоян – СИТУАЦИЯ НА ГРАНИЦЕ ТУРЦИЯ-СОВЕТСКАЯ АРМЕНИЯ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ.....	159
Gevorg Kesoyan – THE SITUATION ON THE TURKISH-SOVIET ARMENIAN BORDER DURING THE GREAT PATRIOTIC WAR.....	160
Արման Սաֆարյան – ՀԱՅ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՎԱՆ-ԴՈՒՅԹՆԵՐԻ ԴԵՐԸ՝ ՄՈՒՆԻՏԻՄԵՆՏԻՎԱԿԱՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ ԲԱՎ-ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ.....	161
Арман Сафарян – РОЛЬ ТРАДИЦИЙ АРМЯНСКОЙ ПУБЛИЦИСТИКИ В ПРОЦЕССЕ ОСВЕЩЕНИЯ ЭКОЛОГИЧЕСКОЙ ПРОБЛЕМАТИКИ В МУЛЬТИМЕДИЙНОМ ПРОСТРАНСТВЕ.....	164
Arman Safaryan – THE ROLE OF ARMENIAN OPINION JOURNALISM IN THE COVERAGE OF ECOLOGICAL ISSUES IN MULTIMEDIA.....	165
Սարգիս Սկրտչեան – ՊԱՆԹԻՐՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ ԻՐԱՆՈՒՄ 20-ՐԴ ԴԱՐԻ ԿԵՐՉԵՐԻՆ - 21-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԵՐԻՆ.....	166
Саргис Мкртчян – ДЕЯТЕЛЬНОСТЬ ПАНТЮРКИСТСКИХ ОРГАНИЗАЦИЙ В ИРАНЕ В КОНЦЕ XX – НАЧАЛЕ XXI ВЕКОВ.....	174
Sargis Mkrtchian – ACTIVITIES OF PAN-TURKISH ORGANIZATIONS IN IRAN AT THE END OF THE 20TH CENTURY - AT THE BEGINNING OF THE 21ST CENTURY.....	174
Սերի Նաջարյան, Հռիփսիմե Մուրադյան – ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎՆԱԶՍԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (2001-2016թթ.).....	176
Мери Наджарян, Рипсима Мурадян – ПОЗИЦИЯ ГЕРМАНИИ В ВОПРОСЕ МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН (2001-2016 ГГ.).....	183
Meri Najaryan, Hripsime Muradyan – GERMANY’S STAND ON THE ISSUE OF INTERNATIONAL RECOGNITION OF THE ARMENIAN GENOCIDE (2001-2016).....	184
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ / ТЕОРИЯ ИСТОРИИ / THEORY OF HISTORY	
Գևորգ Եաղարյան – ԱՆՑՅԱԼԻ ՊԱՏՄԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎՆԱՊԱՐ-ՀԻՆ (ԹՈՄԱՍ ԶԱՐԼԱՅԼԸ ԵՎ ՆՐԱ «ԴԱՐՁԵԱԼ Ի ԿԵՐԱՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ՀՈՂԿԱԾԸ).....	185
Геворг Тшагарян – НА ПУТИ ИСТОРИЗАЦИИ ПРОШЛОГО (ТОМАС КАРЛЕЙЛЬ И ЕГО СТАТЬЯ «СНОВА ОБ ИСТОРИИ»).....	205
Gevorg Tshagharian – ON THE PATHWAY OF HISTORICIZATION OF THE PAST (THOMAS CARLYLE AND HIS ESSAY «ON HISTORY AGAIN»).....	206
Լիզա Քարիմյան – ՀԱՅ-ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ «ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ» ԳՈՏՈՒ Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՈՎԱ-ՖԻԴԱՆՅԱՆԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ.....	207
Лица Каримян – КОНЦЕПЦИЯ АРМЯНО-ВИЗАНТИЙСКОЙ “КОНТАКТНОЙ” ЗОНЫ В. АРУТЮНОВОЙ-ФИДАНЯН.....	216

Liza Karimyan - V. ARUTYUNOVA-FIDANYAN'S CONCEPT OF ARMENIAN-BYZANTINE "CONTACT" ZONE. 217

ՀԱՎԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Ֆրինա Բաբայան - ՀՈՍՏՈՒՆ (ՈՍՏԱՆ) ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԲՆԱԿԱՏԵՂԻԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (2005-2006 ԹԹ.) 218

Фрина Бабаян - РЕЗУЛЬТАТЫ РАСКОПОК СРЕДНЕВЕКОВОГО ПОСЕЛЕНИЯ ХОСТУН (2005-2006 ГГ.) 222

Frina Babayan - RESULTS OF EXCAVATIONS AT THE MEDIEVAL SETTLEMENT OF HOSTUN (2005-2006 SEASONS) 223

Ռաֆիկ Նահապետյան - ԲՆԱԿԵՑՄԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅՈՑ ՄԵՉ (XIX դ. - XX դ. սկիզբ) 228

Рафик Наапетян - ТРАДИЦИОННАЯ СИСТЕМА РАССЕЛЕНИЯ АРМЯН (XIX В. - НАЧАЛО XX В.) 235

Rafik Nahapetyan - THE TRADITIONAL SYSTEM OF SETTLEMENT OF ARMENIANS (XIX CENTURY - BEGINNING OF XX CENTURY) 235

ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES

Արման Եղիազարյան - ՀՅՂ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՂԹԱԿԱՅՐԵՐՈՒՄ 1920-ԱԿԱՆ ԹԹ. ԵՎ ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՀՐԱՎԻՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ 237

Арман Егиазарян - ДЕЯТЕЛЬНОСТЬ АРФ ДАШНАКЦУТЮН В ДИАСПОРЕ В 1920-Е ГОДЫ И ПРОБЛЕМА СОЗЫВА ОБЩЕДИАСПОРНОГО КОНГРЕССА 247

Arman Yeghiazaryan - ACTIVITIES OF ARF DASHNAKTSUTYUN IN DIASPORA IN THE 1920S AND THE PROBLEM OF CONVENING A DIASPORA CONGRESS 248

Հայկ Մարտիրոսյան - ՍՓՅՈՒՌՔԱԳՅԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՄՆ-Ի ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ 249

Айк Мартиросян - СОТРУДНИЧЕСТВО КОМИТЕТА ПО КУЛЬТУРНЫМ СВЯЗЯМ С АРМЯНАМИ ДИАСПОРЫ С АРМЯНСКОЙ ОБЩИНОЙ США 257

Hayk Martirosyan - COOPERATION OF THE COMMITTEE OF THE CULTURAL RELATIONS WITH ARMENIANS OF DIASPORA WITH THE ARMENIAN COMMUNITY OF THE USA 257

Էդիկ Մինասյան - ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽ-ՍՓՅՈՒՌՔ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱԴՆԵՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ 21-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՄՆԱՍՅԱԿՆԵՐՈՒՄ 259

Эдик Минасян - ДЕЯТЕЛЬНОСТЬ ВСЕАРМЯНСКИХ ФОНДОВ, ОБЩЕСТВЕННЫХ И БЛАГОТВОРИТЕЛЬНЫХ ОРГАНИЗАЦИЙ ПО УКРЕПЛЕНИЮ ОТНОШЕНИЙ АРЦАХ-ДИАСПОРА В ПЕРВЫЕ ДЕСЯТИЛЕТИЯ XXI ВЕКА 272

Edik Minasyan – ACTIVITIES OF THE ALL-ARMENIAN FUNDS, NGOS AND CHARITABLE ORGANIZATIONS TO STRENGTHEN ARTSAKH-DIASPORA RELATIONS IN THE FIRST DECADES OF THE 21ST CENTURY. 273

Կարեն Մկրտչյան – ԱՐՏԱԳԱՂԹԸ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԻՐԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 274

Карен Мкртчян – МИГРАЦИЯ И ПРОБЛЕМЫ ОБРАЗОВАНИЯ В АРМЯНСКОЙ ОБЩИНЕ ИРАНА. 280

Karen Mkrtchyan – MIGRATION AND EDUCATIONAL PROBLEMS IN THE ARMENIAN COMMUNITY OF IRAN. 281

ՄԱՆԿԱԿԱՐԺՈՒԹՅՈՒՆ / ПЕДАГОГИКА / PEDAGOGY

Սերի Հովհաննիսյան – ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ՝ ԸՍՏ ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻ (ծննդյան 180-ամյակի առթիվ)..... 282

Мери Оганнисян – ЦЕННОСТНЫЕ ПОДХОДЫ К ОБРАЗОВАНИЮ ПО ГАЗАРОСУ АГАЯНУ. 289

Meri Hovhannisyanyan – VALUE-BASED APPROACHES TO EDUCATION BY GHAZAROS AGHAYAN. 289

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ / РЕЦЕНЗИЯ / REVIEW

Էրիկ Գալեգիսի ՄԻՆԱՍՅԱՆ, ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆԸ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1991-2018 թթ.), ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՂՈՒԹՅՈՒՆ, 2020, 380 էջ + 16 էջ ՆԵՐԴԻՐ:..... 291

ԲԱԶՄԱԿԱՍՏԱԿ ԱԶԳԱԳՐԱԳԵՏԻ ՆՈՐ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 293

ՄԻՔԱՅԵԼ ԱՐՄԵՆԻ ՄԱԼԽԱՍՅԱՆ, ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 16-ՐԴ ԴԱՐՈՒՄ-17-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ, ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՂՈՒԹՅՈՒՆ, 2020, 300 էջ:..... 295

ՀԱՎԵՐԺԻ ՃԱՄՓՈՐԴՆԵՐ 298

ՄԱՀ ԻՄԱՑԵԱԼ. 2020 թ. ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԱՆՄԱՀԱՑԱԾ՝ ԵՊՀ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՍԱՆԵՐԸ 315

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 318

INFORMATION ABOUT THE AUTHORS 320

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 322

NOTICE FOR THE AUTHORS 322

Սուսաննա Առաքելյան

ԲԱՔՎԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ- ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ԵՎ ԴՊՐՈՑԱՍԵՂԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1864-1896 ԹԹ.

Հիմնաբառեր. *Բաքվի հայոց մարդասիրական ընկերություն, կրթա-լուսավորչական, դպրոցաստեղծ, գործունեություն, ցարական իշխանություն, ազգային իշխանություն, օգնություն, նյութական աջակցություն, ուսումնական ծրագիր:*

Դեռևս 1800-ական թթ. սկզբներից հայկական կրթական, մշակութային-լուսավորական հաստատությունները սկսեցին անօրինակ հալածանքների և բռնությունների ենթարկվել ցարական իշխանությունների կողմից: Տարբեր ասպարեզներում էապես սահմանափակվում էր հայերի գործունեությունը: Նման պայմաններում առաջնային էին դառնում ազգային ինքնության, և, որ առավել կարևոր է, ազգային լեզվի պահպանության հարցերը: Վերջին խնդրի լուծումը հնարավոր էր միայն ազգային դպրոցների և լուսավորական կազմակերպությունների ամկայության պարագայում, որոնք, սակայն, այդ տարիներին ինքնուրույն գործելու իրավունք չունեին¹: Այդ բարդ իրավիճակում հայությունը պետք է փորձեր ճեղքեր գտնել գործող պետական կառուցվածքի և օրենքի մեջ՝ իր ազգապահպան խնդիրներին բավարարություն տալու համար: Դավիթ Անանունի բնութագրմամբ՝ հայության համար նման «թագստարան» հանդիսացավ հայոց եկեղեցու կառույցը: «Աշխարհիկ հայութիւնը, – գրում է նա, – կամովին հազաւ հօտի շապիկ և ձգտեց իր աշխարհիկ զարգացման պահանջն իրագործել եկեղեցու կրօնա-կղերական վարագոյրի տակ»²:

Բարեգործական ընկերություններն իրենց հերթին սկսում են գործել եկեղեցուն համահունչ: Շատ դեպքերում նման գործելաոճն այդ ընկերությունների համապատասխան կառույցներին հնարավորություն է տալիս աջակցել կարիքավոր դպրոցականներին և ուսանողներին:

Ժամանակի ոգուն համապատասխան՝ ռուսահայ իրականությունն այդ շրջանում գործ ուներ երկու կարգի՝ պետական և ազգային դպրոցների հետ: Առաջիններն ամեն ինչ անում էին հային հարազատ միջավայրից հեռացնելու համար, իսկ ազգային դպրոցները՝ ձգտում էին հայ պահել նրան: Հայոց եկեղեցին, ստեղծելով հոգաբարձուների խորհուրդ և այդ նպատակի համար ստանալով ժողովրդի նյութական աջակցությունը, ստանձնել էր ազգային դպրոցի տնօրինությունը:

Բաքվի Հայոց Մարդասիրական ընկերությունը, որը հիմնվել է 1864 թ., ի սկզբանե աջակցել է ռուսական կայսրությունում ապրող հայության մեջ լուսավորություն տարածելու գործին³: Մարդասիրականի գործունեության հետ կապված մեր նախորդ հոդվածներում անդրադարձել ենք ընկերության կանոնադրությանը⁴ և որդեգրական գործունեությանը⁵:

* Հոդվածը ներկայացվել է 21.11.2020 թ., գրախոսվել՝ 10.12.2020 թ., ընդունվել տպագրության՝ 15.12.2020 թ.:

¹ Տէ՛ս Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական պարզացումը (1870-1900), հատոր երկրորդ, Էջմիածին, 1922, էջ 117:

² Նույն տեղում:

³ Տէ՛ս Ավետիսյան Ս., Բաքվի հայոց մարդասիրական ընկերության գործունեության պատմությունից, «Բանբեր Հայաստանի արխիվների», Ե., 1986, թիվ 2(75), էջ 129:

⁴ Տէ՛ս Առաքելյան Ս., Բաքվի հայոց մարդասիրական ընկերության կանոնադրության շուրջ, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Ե., 2017, էջ 185-190:

⁵ Տէ՛ս նույն տեղում, Ե., 2018, էջ 139-149:

Սույն հոդածում խնդիր ենք դրել քննության ենթարկել իր գործունեության առաջին 32 տարիների ընթացքում Նրա ծավալած կրթական-լուսավորական և դպրոցաշեն գործունեությունը՝ ընդհուպ մինչև 1896 թ. հայկական դպրոցների փակման երկրորդ փորձը:

Իր կրթական գործունեության մեջ Մարդասիրականը կարևոր տեղ է վերապահել հայկական քաղաքային և գյուղական դպրոցների պահպանմանը:

Ֆինանսական միջոցների սուղ լինելու պատճառով սկզբնապես ընկերության ուշադրության կենտրոնում եղել են լոկ Բաբու քաղաքի երկսեռ դպրոցները: Դեռևս 1865 թ. ընկերության հիմնադիր Դ. Ռոստոմյանը դիմում է Հայոց եկեղեցու Շամախու թեմի առաջնորդին, որպեսզի վերջինս ստանա Ս. Էջմիածնի համաձայնությունը՝ Բաբվի եկեղեցու եկամուտներից 500 ռ. քաղաքի տղաների Նոր բացվող դպրոցին հատկացնելու համար: Դ. Ռոստոմյանը նաև հավելում է, որ ծախսերի մնացած մասը վճարվելու է ընկերության միջոցներից: Նա կարծում էր, որ Բաբվի հայ կրթված հասարակության մեջ կգտնվեին մարդիկ, ովքեր գրեթե անվճար կաշխատեին դպրոցում¹: Թեմակալ առաջնորդը ոգևորությամբ է ընդունում Դ. Ռոստոմյանի առաջարկը, բայց խորհուրդ է տալիս անձամբ դիմել Ամենայն հայոց կաթողիկոսին:

1866 թ. հուլիսի 9-ին Դ. Ռոստոմյանը և ընկերության ատենադպիր Ս. Վարշամյանը վերոհիշյալ խնդրով դիմում են կաթողիկոսին: Տեղյակ պահելով Մարդասիրականի նպատակների մասին՝ Նրանք նաև հայտնում են, որ Բաբվում ընկերության ջանքերով արդեն բացվել են երկու նախակրթարաններ՝ տղաների և աղջիկների համար, որոնց պահպանման համար մեկ տարվա ընթացքում հատկացվել է 1456 ռուբլի²:

Նոր դպրոցի բացման փաստը որոշակիորեն անհանգստացնում է Շամախիի և Էջմիածնի հոգևոր իշխանության ներկայացուցիչներին: Նրանք սկսում են հետաքրքրվել, թե ինչ միջոցներով է պահվելու դպրոցը, ովքեր են հոգաբարձուները, տեսուչները և այլն: Դա առաջ է բերում Դ. Ռոստոմյանի դժգոհությունը: Շամախիի թեմակալին հղած պատասխան գրության մեջ նա նշում է, որ դպրոցը հոգևոր ուսումնարան է կոչվել զուտ եկեղեցու պատվին, մինչդեռ կարող էր իր անվամբ բացել: Նրա կարծիքով Սինոդը կարող է զուտ որպես տեղեկատվություն ճշտել, թե ինչ ծրագրով են սովորելու հայ երեխաները, բայց ոչ ավելին: Դ. Ռոստոմյանը նաև հայտնում էր, որ Ծխական ուսումնարանը պահպանվելու էր միմիայն ընկերության միջոցներով³:

Իր նամակին Դ. Ռոստոմյանը կցել էր նաև դպրոցի ծրագիրը, որում մասնավորապես նշված էր, որ Բաբվի ծխական նախակրթարանը կոչվում է ուսումնարան Մարդասիրական ընկերության՝ հանուն Սուրբ Գրիգոր Լուսավորչի Հայոց և կառավարվում է Նույն ընկերության միջոցներով: Ուսումնարանի առջև նպատակ էր դրված քառամյա կրթություն տալու միջոցով աշակերտներին ռուսական գիմնազիայի երկրորդ դասարան ընդունվելու հնարավորության ընձեռնումը կամ արհեստներ սովորելն ու հոգևոր կոչում ստանալը: Բոլոր աշակերտները՝ հարուստ թե աղքատ, անվճար էին սովորելու: Ուսումնարանը կառավարվելու էր հինգ հոգաբարձուների կողմից, որոնցից մեկը վերատեսուչ էր լինելու: Առաջին դասարանի համար նախատեսված էին երկու, երկրորդ դասարանի համար՝ վեց ուսուցիչներ: Ուսումնարանի տարեկան ծախսը կազմելու էր 1500 ռուբլի⁴: Տարեկան ծախսի համար ուսումնարանին այդքան փոքր գումար հատկացվելը բացատրվում է նրանով, որ, ինչպես նշել ենք, ըստ Դ. Ռոստոմյանի, ուսուցիչներն անվճար էին դասավանդելու:

¹ Տե՛ս Հայաստանի պատմության թանգարան, Նոր և նորագույն պատմության բաժնի ֆոնդ, քմ 840, մմ 10884, Դավիթ Անանուն, Մարդասիրական ընկերություն հայոց 1864-1913 թթ. (այսուհետ՝ ԳՊԹ, Դավիթ Անանուն, Մարդասիրական ընկերություն...), էջ 22:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 23:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 24:

Վերոնշյալ ծրագիրն, անշուշտ, իր ժամանակի համար դժվար իրագործելի էր և քիչ բան է հայտնի դրա կենսագործման վերաբերյալ: Սոսկ արձանագրենք, որ 1875 թ. «Արարատ» ամսագրում հրատարակված մի հոդվածի համաձայն Մարդասիրական ընկերությունն ի սկզբանե ուներ տղաների ուսումնարան, որը 1868 թ. փակվել է¹:

1913 թ. հրատարակված «Հաշիւ 1913 թ. գործունեութեան Բագուի Հայոց Մարդասիրական ընկերութեան յանուն Ս. Գրիգոր Լուսավորչի» համառոտ տեսութեան մեջ ընկերությունն որպէս իր կողմից ձեռնարկված առաջին գործ հիշատակում է օրիորդաց տարրական ուսումնարանը²: Նույն ժամանակ նաև կազմակերպվել է դրահամավաք արդեն գոյություն ունեցող եկեղեցական ծխական ուսումնարանի համար, որը հետագայում գտնվել է ընկերության տնօրինութեան ներքո:

1866 թ. Բաքվի օրիորդաց նախակրթարանը ժամանակավորապէս փակվել է: Դա բացատրվում է նրանով, որ տեղի հայերն այդ ժամանակ դեմ էին իգական սեռի ներկայացուցիչների կրթութեանը: Մարդասիրական ընկերութեան անդամները նախապէս փորձել են հասարակութեանը վարժեցնել այն գաղափարին, որ աղջիկները ևս պետք է կրթություն ստանան: Միայն 1869 թ.՝ շնորհիվ ընկերութեան հիմնադիր Դ. Ռոստոմյանի, Օրիորդաց ուսումնարանը բացվեց և 1870 թ. ստացավ «Ս. Հռիփսիմյան» անունը³: Այն սկզբնապէս ուներ 10-16 աշակերտուհի: Նրանք կարդում ու գրում էին հայերէն և ռուսերէն լեզուներով, սովորում ձեռագործություն, երգ և տնտեսություն կառավարելու սկզբունքներ⁴: Ուսումնարանը սկզբում ուներ ազգութեամբ ռուս ուսուցչուհի, որի օրոք առանձնակի հաջողություններ չեղան: Նրան փոխարինել են Հայրապետ Քալանթարյանցը և իր կինը, որոնք էապէս բարեփոխեցին ուսումնարանի վիճակը: Այդ ընթացքում ընկերությունը ևս փորձել է բարեկարգել օրիորդաց ուսումնարանը⁵: Երկու տարի անց Մարդասիրականը, այլ ծախսերի հետ կապված⁶, որոշում է կրճատել Հ. Քալանթարյանցի աշխատավարձը: Վերջինս այդ պատճառով հրաժարվում է աշխատանքից և մոտ մեկ տարի անց բացում երկսեռ ուսումնարան⁷:

Արդեն 1869 թ. զարնանը պետական պաշտոնյաների աջակցութեամբ Բաքվի հայերը սկսեցին լուրջ ուշադրություն դարձնել դպրոցական գործում տիրող իրավիճակին⁸: Նրանք դիմում են Շամախիի թեմակալ առաջնորդին՝ խնդրելով նոր ծխական ուսումնարան բացել, պարտավորվելով աջակցել դպրոցի ծախսերին՝ ամեն տարի նվիրաբերելով 200 ռուբլի: Բաքվի երեցփոխ Ջավադ Մելիքյանցը մեկ այլ գրութեամբ տեղեկացում է, որ իր հինգ սենյականոց տունն անվճար կտրամադրի բացվող ծխական դպրոցին: «Ընտրողական թուղթ» վերնագրով մեկ այլ փաստաթղթում նշվում է, որ Բաքվում եռամսյա ժամկետով ընտրվել է եկեղեցական ծխական հոգաբարձություն՝ կրոնական և աշխարհիկ գործիչների կազմով: Այն պարտավոր էր հոգ տանել դպրոցի բարեկարգութեան և այլ խնդիրների համար⁹:

Երկար սպասված դպրոցը բացվում է 1869 թ. դեկտեմբերի 1-ին: Բայց այն հեռու էր Դ. Ռոստոմյանի պատկերացրածից: Այն ընդամենը նախակրթարան հիշեցնող կրթօջախ էր, որտեղ տիրացու ուսուցիչը սովորեցնում էր հայոց լեզու, վայելչագրություն և երգեցողություն, իսկ մեկ այլ վարժապետ՝ ռուսաց լեզու, վայելչագրություն և թվաբանություն: Դպրոցը,

¹ Տե՛ս «Արարատ», տարի Է, մարտ, 1875, № 51, էջ 118:

² Տե՛ս Հաշիւ 1913 թ. գործունեութեան Բագուի Հայոց Մարդասիրական ընկերութեան յանուն Ս. Գրիգոր Լուսավորչի, Բագու, 1914, էջ 3:

³ Դավիթ Անանունը որպէս դպրոցի վերաբացման տարեթիվ նշում է 1868 թվականը (տե՛ս ՀՊԹ, Դավիթ Անանուն, Մարդասիրական ընկերութիւն..., էջ 25):

⁴ Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 19 դեկտեմբերի, 1874, № 51:

⁵ Տե՛ս «Արարատ», տարի Ե, մայիս, 1872, № 31, էջ 212:

⁶ Ընկերությունը քանի չէր խնայում, որ հայ աղջիկները կանոնավոր դպրոց հաճախեն: Բանն այն է, որ եթէ աղջիկներն անգամ դպրոցում էին լինում, նրանց տուն էին կանչում տնային գործերի կամ հյուր ունենալու պատրվակով: Մարդասիրականը որոշում է աղջիկներին կրթաթոշակ նշանակել, որ գոնե գումարից չսրկվելու համար չբացակայեն, բայց դա նույնպէս արդյունք չի տվել (տե՛ս «Մշակ», 19 դեկտեմբերի, 1874, № 51):

⁷ Տե՛ս «Մշակ», 19 դեկտեմբերի, 1874, № 51:

⁸ Տե՛ս ՀՊԹ, Դավիթ Անանուն, Մարդասիրական ընկերութիւն..., էջ 24:

⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 25:

որն անվանվել էր Ս. Մեսրոպյան¹, ուսուցչական կայուն կազմ չունենալու և նյութական ու բարոյական արգելքների պատճառով շուտով հայտնվում է ճգնաժամային իրավիճակում:

Մարդասիրական ընկերությունն ամբողջությամբ իր ուշադրության կենտրոնում էր պահում Յոնիսիմյանց իգական դպրոցը, իսկ արական դպրոցը, բացի Մարդասիրականից, գտնվում էր Նաև եկեղեցական հոգաբարձության հոգաժողովի ներքո: 1870 թ. այդ դպրոցներում սովորում էին 91 հոգի, որոնցից 29-ը՝ իգական դպրոցում (25 հայ, 4 ռուս), 62-ը՝ արական դպրոցում: Դասավանդող ուսուցիչները 7-ն էին²:

Չնայած պետական պաշտոնյաները և Բաբվի շատ բնակիչներ խոստացել էին նյութապես աջակցել տղաների դպրոցին, բայց այն գտնվում էր միմիայն Մարդասիրականի հոգաժողովի ներքո: Թեև ըստ կարգի տղաների դպրոցի ղեկավարումը պատկանում էր ծխական հոգաբարձությանը, իսկ Մարդասիրականի խորհուրդը լուրջ նյութապես աջակցող պետք է լիներ, իրականում պատկերը բոլորովին այլ էր: Մարդասիրականի խորհուրդը դառնում է երկսեռ դպրոցների տերն ու տնօրենը, իսկ ծխական հոգաբարձությունը՝ սոսկ եկեղեցու եկամուտներից նպաստ վճարող³: Դա պայմանավորված էր նախ նրանով, որ Բաբվի բոլոր կարող հայերը, որոնք ընդունակ էին որևէ հասարակական գործունեությամբ զբաղվել, համախմբված էին հենց Մարդասիրականի շուրջը և երկրորդ՝ նրանք այդտեղ կարող էին ազատորեն դրսևորել իրենց կամքն ու չենթարկվել հոգևոր իշխանություններին: Դրա հետևանքով ծխական հոգաբարձությունը կորցնում է իր դեմքը և ամբողջովին ենթարկվում Մարդասիրականի խորհրդին: Դպրոցների բացումից միայն 15 տարի անց Մարդասիրականը հրաժարվեց իր արտոնություններից և դպրոցները հանձնեց ծխական հոգաբարձությանը՝ իրեն վերապահելով լուրջ խորհրդականի և նյութապես աջակցողի դերը⁴:

1870 թ. օրիորդաց ուսումնարանի դահլիճում տեղի է ունենում ընկերության խորհրդի նիստը, որում ընտրված նոր կազմը հաջողությամբ կառավարում և բարեկարգում է օրիորդաց ուսումնարանը⁵: Նաև ընկերության գանձարանից հատկացվում է ամենամյա որոշակի գումար Շամախու նորաբաց ուսումնարանի համար⁶:

1870 թ. փետրվարի 12-ին Անդրեաս արքեպիսկոպոսը «Արարատ» ամսագրի խմբագրություն է ուղարկում Մարդասիրականի ատենադպիր Ս. Վարչամյանցի նամակը, որում առկա էր տեղեկատվություն հիմնադրումից հետո ընկերության ծավալած յոթ տարվա գործունեության մասին: Դրանում արձանագրվում էր օրիորդաց ուսումնարանի բարեկարգումը, այնտեղ դասավանդվող առարկաների ցանկը և մատնանշվում, որ Մարդասիրական ընկերության անդամների ցանկությամբ՝ այլ հոգևոր ուսումնարանների պես այն գտնվում է Հայոց կաթողիկոսի հովանավորության ներքո⁷:

Ս. Վարչամյանցի կողմից 1873 թ. հրատարակած «Տարեհանդես»-ում որոշակի տեղեկատվություն է տրվում ընկերության ֆինանսական վիճակի մասին: Մասնավորապես նշված է, թե ընկերությունը որքան գումար էր վճարում օրիորդաց ուսումնարանի վարժուհուն, հայոց լեզվի և վայելչագրության ուսուցիչ հորեն քահանային, պահապանին, վառելափայտի և այլ կարիքների համար⁸: Ընկերության 1874 թ. հաշիվներից երևում է, որ օրիորդաց ուսումնարանի երկու ուսուցիչներին վճարվել է 591 ռուբլի 66 կոպեկ, իսկ Գանձակի և Սղնախի երկսեռ ուսումնարաններին՝ 155 ռուբլի⁹:

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 26:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 27:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 28:

⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 9, թ. 4:

⁶ Տե՛ս նույն տեղում, թ. 4-ի շրջ.: Տե՛ս նաև «Արարատ», տարի Ե, 31 մայիսի, 1872, էջ 212:

⁷ Տե՛ս «Արարատ», տարի Դ, 29 փետրվարի, 1872, էջ 76:

⁸ Տե՛ս ՏԱՐԵ-ՀԱՆԴԵՍ ԿԱՍ ԶԱՇԻՒ Յօրինեաց Բագուայ Հայոց Մարդասիրական Ընկերութեան Անդամ և Ատենադպիր Սերգեյ Ս. Մ. Վարչամյանց. վասն 1873 ամի (այսուհետ՝ ՏԱՐԵ-ՀԱՆԴԵՍ...), Բագու, 1874, էջ 6, 17:

⁹ Տե՛ս «Արարատ», տարի Ե, մարտ, 1875, № 51, էջ 118:

Մարդասիրականի այդ տարիներին հրապարակած հաշիվներից ակնհայտ է, որ նրա բյուջեն առանձնապես մեծ չէր, քանի որ մուտքերը չնչին տոկոս էին կազմում: Միաժամանակ աչքի է զարնում մի ցավալի հանգամանք. չնայած ուսուցիչների անխնայ գործունեությանը, աշակերտների մոտ առաջադիմություն չէր նկատվում: Խնդրահարույց էր նաև այն, որ ուսումնարանը չուներ վերատեսուչ: Երկար փնտրտուքից հետո, ի վերջո, այդ գործը ստանձնելու հրավեր է ստանում Հովսեփ Մելիք Բեգլարյանցը, ում վրա դրվում է նաև տղայոց դպրոցի վերատեսչությունը¹:

1875 թ. սկսած Մարդասիրականը սկսում է հատուկ ուշադրություն դարձնել գավառական դպրոցներին²: Նկատի ունենալով, որ Բաքվում արդեն կա երկսեռ ուսումնարան, ընկերությունը որոշում է փոխել իր գործունեության ասպարեզը՝ շեշտը դնելով անուսում գյուղացիներին կրթելու և որդեգիրներ պահելու վրա:

Մարդասիրական ընկերության արխիվային չթվագրված փաստաթղթերից մեկում ներկայացվում է ընկերության խորհրդական ժողովի հանձնարարությամբ դպրոցների վերանորոգման հարցի հետ կապված հատուկ մասնաժողովի նախագիծը: Ենթադրում ենք, որ այն թվագրվում է 1870-ական թթ. առաջին կեսով: Այդ նախագծով մասնաժողովն առաջարկում էր Շամախու տարածքում բացել երկամյա մի դպրոց՝ 40 տղաների և 40 աղջիկների համար նախատեսված զուգահեռ դասարաններով՝ մեկական ուսուցիչներով: Դպրոց ընդունելու էին ութ տարեկանը լրացած երեխաներին: Դրա համար նախատեսվում էր ծախսել 1700 ռ.: Նման մի դպրոց էլ նախատեսվում էր բացել Բաքվի կենտրոնում՝ ընկերությանը պատկանող շինություններից մեկում, որի ծախսը կազմելու էր 1300 ռ.: Բացի այդ, 2500 ռ. ծախսով դարձյալ Բաքվում ստեղծվելու էր համանման ևս մեկ դպրոց³:

Ընկերության 1874 թ. ներկայացրած հաշվետվությունում աջակցություն ստացած դպրոցների թվում հիշատակվում են հետևյալ դպրոցները և ուսումնարանները. Գանձակի մասնավոր օրիորդաց ուսումնարանին՝ 20 ռ., Խաչկապ գյուղի անապահով օրիորդ ուսանողներին՝ 10 ռ. և 35 դասատուներ, Գանձակի Նորաշեն թաղի ծխական դպրոցին՝ 10 ռ., Բանանցի ծխական ուսումնարանին՝ 40 ռ., Գետաշենի Հայոց ազգային հոգոր ուսումնարանի աղքատ երեխաների համար 100 հատ դասատու, Սղնախի Նորաբաց Շուշանիկյան ուսումնարանի օրիորդների համար՝ 15 ռ., Գանձակի Նորաբաց օրիորդական դպրոցի աշակերտներին՝ անվճար դասագրքեր և գրենական պիտույքներ⁴:

Չնայած դրան, ընկերության նույն հաշվետվության մեջ մտահոգություն էր հայտնվում Բաքվի Օրիորդաց ուսումնարանում ստեղծված իրավիճակի վերաբերյալ, արձանագրելով, որ այն ժամանակի պահանջների համեմատ չի գործում: Հաշվետվության մեջ դա բացատրվում էր նրանով, որ ընկերության հիմնադիրները կարծել են, որ հասարակությունը, ճիշտ գնահատելով դպրոցի կարևորությունը, դրամական և բարոյական աջակցություն կցուցաբերի, մինչդեռ նրանց սպասելիքները չէին արդարացել և ընկերությունն իր սուղ միջոցներով ի գորու չէր եղել բարձր վարձատրությամբ լավ պատրաստված ուսուցիչներ վարձել, որոնք կբարձրացնեին դպրոցի հեղինակությունը: Ելնելով դրանից, նիստը ղեկավարող Խաչատուր Քանանյանցը խորհրդական ժողովին առաջարկել էր քննել և կարծիք հայտնել Բաքվի օրիորդաց ուսումնարանի փոխարեն մեկ ուրիշ ավելի օգտակար գործ ձեռնարկելու, օրինակ՝ գյուղերում օրիորդաց դպրոցներ բացելու հարցը⁵:

Վերը նշված խնդրի վերաբերյալ «Մշակ» թերթում ծավալվում է բանավեճ, որին մասնակցում են Ա. Գալստյանցը, Մ. Հովսեփյանը և Ս. Վարշամյանը: Ա. Գալստյանցը օրիորդա-

¹ Տե՛ս ՏԱՐԵՅԱՆԴԵՍ..., էջ 11-13:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 204, թ. 3 և շրջ.:

³ Տե՛ս նույն տեղում, գ. 24, թ. 145 և շրջ, 146 և շրջ, 147:

⁴ Տե՛ս ՀԱՇԻԻ Խորհրդոյն ժողովոյ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ հաստատեալ Մարդասիրական Ընկերութեան յանուն արքոյն Գրիգորի Լուսաւորչի ի Բազու վասն 1874 ամի, Բազու, 1875, էջ 3-4:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 11-23:

կան ուսումնարանի փոխարեն գյուղերում օրիորդաց դպրոցներ բացելն ինչ-ինչ պատճառներով ավելի աննպատակահարմար համարելով¹, առաջարկում է, որ ընկերությունը դպրոցների փոխարեն արհեստանոցներ բացի: Պատասխան հոդվածներում Մ. Յովսեփյանը² և Ս. Վարչամյանը հակադարձում են ընկերության հասցեին Ա. Գալստյանցի հնչեցրած քննադատությանը: Փաստելով, որ ընկերությունն իր գործունեությունը ծավալում է սուղ միջոցներով՝ լոկ իր հիմնական անդամների նվիրաբերած գումարներից ստացվող տարեկան տոկոսներով, Ս. Վարչամյանը գտնում էր, որ այն չէր կարող իր կատարածից ավելի մեծ գործեր ձեռնարկել³:

Չնայած դրան, «Մշակ»-ը նույն թվականին արձանագրում է Մարդասիրական ընկերության հովանավորության ներքո գործող Բաբվի երկսեռ ուսումնարաններում տեղի ունեցած դրական տեղաշարժը՝ կապված խորեն վարդապետի տեսչության հետ: Ըստ որում, առաջընթացն առկա էր ոչ միայն ուսման, այլև կարգապահության և մաքրության առումով⁴:

Եթե մինչև 1874 թ. Մարդասիրականը կենտրոնացած էր Բաբվում գործող դպրոցների վրա, ապա դրանից հետո սկսում է ուշադրություն դարձնել նաև գավառական դպրոցներին: Սկզբում դա Եպիգոդիկ բնույթ էր կրում և հիմնված էր առանձին անհատների դիմում-խնդրագրերի վրա: Այսպես. 1875 թ. փետրվարին, Էջմիածնի Գևորգյան ճեմարանի հրդեհի հետ կապված, Մարդասիրականն ուղարկում է 100 ռուբլի: Նույն ամսին ընկերության գանձակեցի անփոփոխ անդամ Ներսես Տեր-Ներսիսյանին է ուղարկվում 75 «դասատետր», իսկ Թիֆլիսի թեմական տեսչին՝ նույն Տեր-Ներսիսյանի միջնորդությամբ՝ 100 «դասատետր»: Ընկերությունը դասագրքեր և փոքր գումարներ է հատկացրել Գանձակի, Խաչկապի, Բանանցի և Սղնախի դպրոցներին: Նրա դպրոցական օժանդակության գումարը կազմել է 1077 ռուբլի⁵:

Գործունեության այս ձևը փոխվում է 1875 թ. օգոստոսին, երբ Ղուբա գավառի Զիվար գյուղում բացվում է ծխական դպրոց: Գյուղի բնակիչները դիմումով խնդրում են Մարդասիրականին՝ որպեսզի վերջինս հանձն առնի դպրոցի ուսուցչին տրվելիք ամսական 12 ռուբլի 50 կոպեկ աշխատավարձի վճարումը: Ընկերությունն ընդունում է դիմումը՝ այդպիսով թևակոխելով դպրոցական գործունեության նոր՝ կանոնավոր օգնության փուլ⁶:

Չնայած Բաբու քաղաքի և գյուղական բնակավայրերի դպրոցներին իր սուղ միջոցներով օգնելու ընկերության ջանքերին, նրա 15 ամյակի առթիվ «Մշակ» թերթում 1878 թ. տպագրվում է Զ. Առաքելյանի հոդվածը: Հոդվածագիրը մտահոգություն էր հայտնում, որ Մարդասիրականի խորհուրդը մինչ այդ պահը չի կարողացել գոնե մեկ բարեկարգ դպրոց ունենալ: Որպես օրինակ նա բերում է իր տեսադաշտում գտնվող դպրոցի անմխիթար վիճակը, կասկած հայտնելով, որ վիճակն ավելի անմխիթար կլինի գյուղական վայրերում: Հեղինակը ճիշտ էր համարում, որ ընկերությունը որևէ գյուղում ունենար իր սեփական դպրոցը և հավանություն չէր տալիս բոլոր կարոտյալներին անխտիր օգնելու Մարդասիրականի գործելակերպին: Ըստ նրա՝ ընկերության նվիրաբերած գումարները չնչին են և կառավարիչները դրանով լոկ «...կամենում են ժողովրդի աչքին թոզ փչել. «այսբան գիւղերի օգնեցինք» փոխանակ մտածելու, որ այդպիսով զուր տեղ էք վատնում ազգի գումարը»⁷:

1878 թ. նոյեմբեր-դեկտեմբերին «Մշակ»-ում Մարդասիրականի վերաբերյալ հրապարակվում են ևս մի քանի հոդվածներ, որոնց հեղինակները բարձրացնում էին մի շարք հար-

¹ Տե՛ս «Մշակ», 5 դեկտեմբերի, 1874, № 49:

² Տե՛ս նույն տեղում, 29 մայիսի, 1875, № 21:

³ Տե՛ս նույն տեղում, 23 հունվարի, 1875, № 3:

⁴ Տե՛ս նույն տեղում, 28 փետրվարի, 1877, № 14:

⁵ Տե՛ս ՀՊԹ, Դավիթ Անանուն, Մարդասիրական ընկերություն..., էջ 39:

⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 24, թ. 5:

⁷ «Մշակ», 28 հոկտեմբերի, 1878, № 185:

ցեր: Կասպիացի մականունով հողվածագիրը փաստում էր, որ 1878 թ. Բաքվում կար հայկական ընդամենը երկու դպրոց՝ Նախատեսված օրիորդների և տղաների համար: Դրանցից առաջինը պահվում էր Մարդասիրական ընկերության միջոցներով, իսկ երկրորդը՝ եկեղեցու¹: Հողվածագիրը դեմ էր, որ Մարդասիրականի Նախկին որդեգիր Ավագ Գրիգորյանցը, որի արժանիքների վերաբերյալ լուրջ կասկածներ ուներ, քահանա ձեռնադրվի և դպրոցներում հայոց պատմություն և կրոն դասավանդի: Նրա կարծիքով Ա. Գրիգորյանցը ոչ թե ուսուցչի արժանի թեկնածու էր, այլ մեկը, որին ընկերությունը փորձում էր ապրելու հնարավորություն տալ²: Չեզոք մականունով հողվածագիրն իր հերթին արձանագրում էր Մարդասիրականի աշխատանքի տեմպերի դանդաղումը՝ դրանում մեղադրելով ընկերության զարգացած անդամներին՝ տարեց Նախագահ Մամիկոնյանին, Քանակյանին և ատենադպիր Վարչամյանին³: Գ. Ա. ստորագրությամբ հողվածագիրն էլ ընկերության գործունեության անկումը պատճառաբանում էր նրա կենտրոնի գավառային քաղաքում գտնվելու փաստով և առաջարկում այն տեղափոխել երկրամասի կենտրոն Թիֆլիս, որտեղ առկա էր ավելի որակյալ և մեծաթիվ մտավորականություն⁴:

Պատասխան հողվածում ընկերության ատենադպիր Ս. Վարչամյանը, չհերքելով հնչած մեղադրանքները, ընդհուպ՝ ընկերության վաճառական անդամներին անգրագետ համարելը, այնուամենայնիվ, փաստում էր, որ հնարավորությունների սահմաններում արվել է ամեն ինչ՝ ընկերության բարգավաճման համար⁵:

Մարդասիրական ընկերության 1879 թ. հունվարի 30-ին կայացած ընդհանուր ժողովում ևս ի հայտ եկան տարածայնություններ: Քննության առարկա դարձավ այն հարցը, թե ընկերությունն ու՞մ պետք է տար Նախապատվություն. իր գործունեությունը կենտրոնացնել միայն Բաքվում՝ տեղական կարիքների և դպրոցների վրա, թե՞ օգնել նաև Բաքվից դուրս գտնվող ինդրատուներին⁶: Ըստ երևույթին անդամներից շատերը տեղյակ չէին, որ համաձայն կանոնադրության՝ ընկերությունը պետք է աջակցեր Ռուսաստանի տարածքում ապրող հայերին:

1879 թ. «Մշակ»-ի էջերում շարունակում է հնչել քննադատություն ընկերության հասցեին, մատնանշվում նրա միջոցներով պահվող միակ ուսումնարանում տիրող ոչ բարվոք վիճակը՝ կապված Նախկին տեսուչ Թուսիկյանցի և նրան փոխարինած Ստեփանյանի ոչ արդյունավետ գործունեության հետ⁷: Մասնավորապես նշվում էր վերջինիս մեծ զբաղվածությունը՝ կապված այն բանի հետ, որ նա ստանձնել էր նաև Բաքվի Նահանգի ռուսական դպրոցների տնօրենի պաշտոնը⁸: Դրան հակառակ, 1880 թ. սկզբին Ալեքսանդր Մովսեսյանի «Մշակ»-ում հեղինակած հողվածում արձանագրվում է ընկերության աշխատանքներում առկա որոշակի առաջընթացը: Տեղեկացվում էր, որ ուսումնարանի տեսուչ Պ. Ստեփանյանի առաջարկով ընկերության խորհրդի ժողովը որոշել է ուսումնարանի համար բացել երկրորդ դասարան: Նաև որոշվել էր ընկերությանը պատկանող շենքի երկրորդ հարկ կառուցել: Դրան իրենց նյութական մասնակցությունը պետք է բերեին նաև հայ մեծահարուստները, որոնց իրավունք էր տրվում 15-20 տարի օգտվելու նոր կառուցվող սենյակների եկամուտներից (Նախատեսվում էր, որ այդ սենյակները և դահլիճը պետք է տրվեին վարձով)⁹:

1882 թ. «Արձագանք»-ում լույս տեսած անստորագիր հողվածի հեղինակը, հակադրածելով «Մշակ», «Արձագանք», «Մեղու» և այլ պարբերականներում Մարդասիրական ընկերության գործունեության վերաբերյալ հնչեցված տարաբնույթ քննադատություններին,

¹ *Տե՛ս նույն տեղում, 15 նոյեմբերի, 1878, № 197:*

² *Տե՛ս նույն տեղում:*

³ *Տե՛ս նույն տեղում, 24 նոյեմբերի, 1878, № 203:*

⁴ *Տե՛ս նույն տեղում, 15 դեկտեմբերի, 1878, № 217:*

⁵ *Տե՛ս նույն տեղում:*

⁶ *Տե՛ս նույն տեղում, 7 փետրվարի, 1879, № 17:*

⁷ *Տե՛ս նույն տեղում, 26 հոկտեմբերի, 1879, № 185:*

⁸ *Տե՛ս նույն տեղում, 23 մայիսի, 1880, № 86:*

⁹ *Տե՛ս նույն տեղում, 23 փետրվարի, 1880, № 29:*

պարզաբանում էր, որ ընկերությունը միայն Բաբու քաղաքի համար չի ստեղծվել, և ճիշտ չէ տարբեր քաղաքներից հավաքած անդամական վճարներն օգտագործել միայն Բաբուի պես հարուստ քաղաքում: Ըստ հողվածագրի՝ ընկերության գործունեության հիմնական վայրը պետք է լինեն գյուղերը¹:

Մարդասիրական ընկերության նախագահ Սամվել Բաղիրյանցը 1882 թ. հունվարի 30-ին հրաժարվում է շուրջ երեք տարի իրեն վստահված գանձապահի պաշտոնից: Ընդունելով, որ այդ տարիներին նյութական միջոցների սուղ լինելու պատճառով ընկերության գործունեության բնագավառները և ասպարեզները չեն ավելացել, նա նշում էր, որ, այնուհանդերձ, արել են այն, ինչ հնարավոր էր: Դպրոցներին հատկացված թերի նպաստները նա բացատրում էր այն իրողությամբ, որ Բաբուի հայ հասարակությունը վերջին երեք տարիներին գլխավորապես օգնություն էր հատկացրել առավել կարոտյալներին²:

1880-ական թվականների երկրորդ կեսին նկատվում է Մարդասիրական ընկերության տնօրինության տակ գտնվող դրամական միջոցների որոշակի աճ և դրա հետ կապված նաև դպրոցական-կրթական գործունեության աշխուժացում: 1886 թ. «Նոր դար» թերթում հրապարակվում է Գրիգոր Դիլդարյանցի հողվածք, որում փաստվում էր, որ Նուխի գավառի Նիժ, Վարդաշեն և այլ գյուղերում մեծ թիվ կազմող թրքախոս հայերի միջավայրում՝ Սուլթան Նուխի գյուղում, հիմնվել է ուսումնարան, և Մարդասիրական ընկերությունը պարտավորվել է տարեկան 200 ռուբլի դրամական օժանդակություն ցուցաբերել նրան³:

Այդ տարիներին ընկերության միջոցների աճի մասին պատկերացում են տալիս «Նոր-Դար» և «Արձագանք» պարբերականներում հրապարակված տվյալները: «Նոր-Դար»-ում 1888 թ. փետրվարին տպագրված Մարդասիրականի դրամական հաշվից երևում է, որ ընկերությունն իր հաշվին մինչև 1887 թ. հունվարի 1-ը ունեցել է 35 773 ռ., 37 կ., որը 1887 թ. ընթացքում ավելացել է՝ դառնալով 68 988 ռ., 6 կ.⁴: Ընկերության այս հաշիվը տպագրվել է նաև «Արձագանք»-ում⁵: 1889 թ. հրատարակված հաշվից պարզվում է, որ 1888 թ. Մարդասիրականը տնօրինել է 84 374 ռ., 25 կ., որից ընդհանուր առմամբ ծախսել է 18 028 ռ., 10 կ.⁶: Վերը բերված հաշիվներից ակնհայտ է, որ ընկերության եկամուտներն իրոք աճել են: Դրանից էլ բխում է նրա հետագա գործունեության ոլորտների բազմազանությունը:

Միջոցների սղության պատճառով Մարդասիրականը որոշել էր առաջնահերթ օգնություն հատկացնել այն գավառներին կամ գյուղերին, որտեղ հայ բնակչությունը գտնվում էր ընչազուրկ և իրավազուրկ վիճակում: Այդ սկզբունքը ընկերության համար դարձավ ելակետային: Դավիթ Անանունի բնութագրմամբ՝ Մարդասիրական ընկերությունն այնտեղ էր, որտեղ առաջնային խնդիր էր լեզվի վերականգնման հարցը, որտեղ հայկական մնացորդի գլխին կախված էր անհետացման վտանգը, որտեղ, վերջապես, մղվում էր հավասարության քարոզչություն: Այդ վայրերից էին Ղուբայի, Նուխու, Շամախու և Գորիի գավառները: Հայ գյուղացիությունն այդ վայրերում թաթախոս էր, թրքախոս, վրացախոս և նրանց մեջ թշնամություն էին սերմանում տարբեր դիմակավոր «բարեկամներ», ինչը խանգարող հանգամանք էր հանդիսանում գյուղական համայնքների խաղաղ գոյատևման համար⁷:

Որպես հատկանշական օրինակ բերենք Նուխի գավառի օրինակը, որտեղ թե՛ պայքար էր ընթանում և՛ լեզվի, և՛ կրոնի պահպանման համար: Այստեղ ծայրահեղ լարված վիճակ էր ստեղծվել Վարդաշեն գյուղում: Մարդասիրական ընկերությունում որպես այս գավառի շահերի պաշտպան՝ հանդես էր գալիս վաճառական Գրիգոր Դիլդարյանը⁸, ում հասարակական գործունեությունը կապված էր մասնավորապես եկեղեցու և աղքատանցի

¹ Տե՛ս «Արձագանք», տարի Առաջին, 15 օգոստոսի, 1882, № 26, էջ 405-406:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 24, թ. 6 և շրջ.:

³ Տե՛ս «Նոր-Դար», Թիֆլիս, 4 դեկտեմբերի, 1886, № 207:

⁴ Տե՛ս նույն տեղում, 3 փետրվարի, 1888, № 12:

⁵ Տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 31 հունվարի, 1888, № 3, թ. 33:

⁶ Տե՛ս նույն տեղում, 12 փետրվարի, 1889, № 5, թ. 76:

⁷ Տե՛ս ՀՊԹ, Դավիթ Անանուն, Մարդասիրական ընկերություն..., էջ 40:

⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 41-42:

հետ: 1882 թ. մարտի 19-ին Վարդաշենի Ս. Սահակյան Հոգևոր դպրոցի հոգաբարձուներ Հարություն Մնացականյանը և Պետրոս Խաչատրյանը Արցախի վիճակի թեմի վերատեսուչ Հովհաննես Տեր-Գրիգորյանին գրած նամակում հայտնում են, որ հանդիպել են Կովկասում ուղղափառություն տարածող ռուսական ընկերության հիմնած դպրոցի տեսուչ, աուդիտոր Նիկոլայ Լիխաչևին: Վերջինս, ժամանելով Վարդաշեն, ռուսաց լեզվի ուսուցիչ Բեժանովի տան մոտ հավաքել է ռուսական ուսումնարանի ռուս աշակերտներին և առաջարկել միավորել այդ բազմազգ գյուղի երկու՝ հայկական և ռուսական ուսումնարանները՝ շեշտելով, որ դրանցից ռուսականը շատ առավելություններ ունի հայկականի նկատմամբ: Ն. Լիխաչևն այդ կերպ ձգտում էր կազմաքանդել հայոց դպրոցը: Գյուղի հայ բնակչությունը, պատճառաբանելով, որ որևէ ներդրում չունի ուսումնարանի բացման գործում, հրաժարվել է պատասխանել այդ առաջարկին և վճիռ կայացնելու համար դիմել Մարդասիրական ընկերությանը: Վերջինս իր հերթին ընտրել է վերոհիշյալ երկու նամակագիրներին, որպեսզի ժողովրդական խորհրդի համաձայնությամբ մերժեն Ն. Լիխաչևին¹:

Մարդասիրականի արխիվային փաստաթղթերում պահպանվել են մի շարք խնդրագրեր, որոնցից երևում է թե ընկերությունը որ գյուղերից է ստացել օգնության խնդրանք: Բերենք մի օրինակ: Ղազախի Քարվանսարա գյուղի հոգաբարձուները Ղուկաս քահանա Սիմեոնի և Հովհաննես Հարությունյանի միջնորդությամբ 1877 թ. դիմել են ընկերությանը: Տեղյակ պահելով, որ իրենց սուղ միջոցներով կառուցվող ծխական ուսումնարանի շենքը ֆինանսական միջոցներ չունենալու պատճառով կիսակառույց է մնացել, նրանք ընկերությունից դրամական աջակցություն էին խնդրում²:

1880-ական թթ. Մարդասիրականը սկսում է ուշադրություն դարձնել դպրոցների ներքին կարգ ու կանոնին, ապա նաև առողջապահությանը: 1881 թ. որոշվում է աշակերտների ընդունելությունը կազմակերպել տարվա մեջ երկու փուլով՝ սեպտեմբերին և հունվարին: Նախկինում ընդունելությունը կազմակերպվում էր դիմումների ներկայացման ժամկետով, ինչը բարդացնում էր ուսուցիչների աշխատանքը, քանի որ յուրաքանչյուր նոր աշակերտի հետ նրանք ստիպված էին նորից անցնել նույն դասընթացը: Բայց այդ նոր կարգը երկսեռ դպրոցներում չէր գործում, քանի որ չէին մերժում խնդրատուներին: Դրա հետևանքով աշակերտների թիվը նախատեսվածից ավելին էր լինում: Առողջապահության նպատակով որոշվում է իգական դպրոցներում ունենալ 60 աշակերտ, իսկ արականում՝ 130 աշակերտ: Ուսման վարձի չափ սահմանվում է՝ հարուստներից 15 ռուբլի, միջին կարողության տեր անձանցից՝ 9 ռուբլի: Կարևորվում է ծնողական ժողովների անհրաժեշտությունը և որոշվում նրանց հետ մշտական կապի մեջ լինել:

Ընկերության արխիվային վավերագրերում պահպանվել է նաև Բաբվի հայոց երկսեռ ուսումնարանների 1881 թվականով թվագրվող կրթական ծրագիրը, որում մանրամասն ներկայացված է, թե որ փուլում ինչ առարկաներ են դասավանդվելու: Համաձայն այդ ծրագրի, երկսեռ ուսումնարանի համար նախատեսվում էր քառամյա ուսում՝ նախակրթարան, Ա, Բ և Գ բաժանմունքներ³:

1882 թվականից սկսեցին ուշադրություն դարձնել Մարդասիրականի ուսումնարաններում դասավանդվող առարկաների բովանդակությանը և ծավալին: Ընկերության խորհրդին կից գործում էր դպրոցական հանձնաժողով՝ ի դեմս Խ. Անանյանցի, Մ. Լազարյանցի և Մ. Պապովյանցի: Այդ հանձնաժողովին կից, ծրագրի շրջանակներում աշխատում էին նաև ուսուցչական կազմի ներկայացուցիչները և, առհասարակ, գործընթացին ծանոթ անձինք: Քննարկումները հիմնականում ընթանում էին երկու մոտեցումների շուրջ: Ոմանք կարծում էին, որ հայկական դպրոցների ծրագրերի հիմքում պետք է դրվի մայրենի լեզվի բազմակողմանի ուսումնասիրությունը: Մյուսները պնդում էին, որ աշակերտին պետք է պատրաստել

¹ ՏԵՍ ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 24, թ. 68 և շրջ.:

² ՏԵՍ նույն տեղում, գ. 17, թ. 91 և շրջ.:

³ ՏԵՍ նույն տեղում, գ. 23, թ. 149 և շրջ., 150 և շրջ.:

պետական դպրոց ընդունվելու նպատակադրմամբ, որ նա ավարտելով առաջին դասարանը, կարողանա անարգել ընդունվել պետական դպրոցի երկրորդ դասարան: Այդ խնդիրն ապահովելու համար հարկ էր առաջին դասարանից սկսած հատուկ ուշադրություն դարձնել ռուսերեն լեզվի ուսուցմանը և ավելի լայն ծրագրով շարունակել մայրենի լեզվի ուսուցումը:

Հանձնաժողովը չկարողացավ նշված խնդիրների վերաբերյալ համաձայնության գալ: Այդ պատճառով ստեղծվում է նոր հանձնաժողով, որի մեջ մտան Մ. Կարապետյանցը, Ե. Սաֆարյանցը, Պ. Ղուկասյանցը, Մ. Տեր-Օհանյանը և Պ. Հունունտցյանը: Վերջիններս նույնպես, ընդունելով, որ հայ երեխաների կրթությունը պետք է ապահովի նրանց մուտքը պետական դպրոցներ, միաժամանակ հավելում են, որ երկրորդ դասարանում պետք է ավելացնել ռուսերենի ընթերցանության և գրավորի դասերը, իսկ հայոց լեզուն պետք է պահպանի իր տեղն ու դերը: Կարևորվում էին նաև հայոց լեզվի քերականությունը, հայ գրականության և հայ մատենագիրների գործերի ուսումնասիրությունը, Հայաստանի աշխարհագրության և ազգային պատմության որոշ դրվագների ուսուցանումը: Վերջինիս սոսկ դրվագային ուսուցանումը պայմանավորված էր նրանով, որ ամբողջականի դեպքում հարկ կլիներ ծրագրերում ներառել նաև Ռուսաստանի պատմությունը: Օրիորդաց դպրոցների ծրագրերից հանվում է ասեղնագործությունն առարկան և դրա փոխարեն մտցվում կար ու ձևի դասեր:

Այդուհանդերձ, հայկական դպրոցներում առարկաների դասավանդումը իրականացվելու էր ռուսերենով, իսկ հայոց լեզուն պարզապես լինելու էր առարկաներից մեկը¹:

Ընդունված ծրագիրը գործեց ընդամենը մեկ տարի՝ մինչև 1883 թ., երբ դպրոցներն անցան ծխական հոգաբարձության տնօրինության ներքո: Թեպետ դա Մարդասիրական ընկերությանը չխանգարեց հետայնու ևս զբաղվելու դպրոցական հարցերով: Խնդիրը նոր հնչեղություն ստացավ 1887 թ. Բաքվի Գիմնազիչեսկայա փողոցի վրա ընկերության միջոցներով շենքի կառուցման ավարտից հետո²: Առաջադրված նոր խնդիրների հիման վրա Մարդասիրականը եկավ նոր եզրահանգումների: Արձանագրելով, որ եկեղեցական-ծխական ուսումնարաններն իրենց սահմանափակ հնարավորություններով ի զորու չեն բավարարելու հայ ժողովրդի հոգևոր և մտավոր պահանջները, ճիշտ էր համարվում, որ ընկերության միջոցներով կառուցված շենքում Շամախու թեմի համար բացվի մի նոր թեմական դպրոց: Որպեսզի նոր դպրոցը գերծ լինի խնդիրներից, առաջարկվում էր նրա վարչությունը կազմող հոգաբարձուների կեսին ընտրել Մարդասիրականի խորհրդի անդամներից, մյուս կեսին՝ ժողովրդից³:

Ի դեպ, վերոհիշյալ շենքի կառուցման հետ կապված Մարդասիրական ընկերությունը գերծ չմնաց ժամանակի մամուլի քննադատությունից: «Արձագանք»-ն իր հրապարակման մեջ նշում էր, թե Բաքվի Մարդասիրական ընկերությունը ցանկանում է աշխարհին զարմացնել, քանի որ որոշել է այդ շինության վրա ծախսել 125 000 ռ., որն ավելին է, քան ընկերության նյութական կարողությունը: «Մարդ. ընկերութիւնը այս ահագին գումարով մի փառաւոր տաճա՞ր է ուզում շինել, կամ մի համալսարանական շինութի՞ւն, կամ գուցէ թանգարա՞ն,— գրում է «Արձագանք»-ը,— Ոչ ամենևին. նա 125 000 ռ. ծախսելու է մի հասարակ երկդասեան ծխական ուսումնարանի շինութեան վերայ»⁴: Հակառակ դրան, Մարդասիրականի 1899 թ. ընդհանուր ժողովում ընկերությունն իր նշանակալի ձեռքբերումների թվում ներկայացնում է նաև այդ շինության կառուցումը, որի վրա ժամանակի գներով ծախսվել էր 116 000 ռ.⁵, իսկ ընդամենը մի քանի տարի անց այն արդեն արժեր կես միլիոն ռուբլի:

Մարդասիրական ընկերության 1885 թ. ընդհանուր ժողովում ի թիվս այլ հարցերի քննարկվում է ծխական ուսումնարաններին այլևս չֆինանսավորելու հարցը: Բայց, ինչպես

¹ Տէ՛ս ՀՊԹ, *Դավիթ Անանուն, Մարդասիրական ընկերութիւն...*, էջ 34-35:

² Տէ՛ս ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 204, թ. 3 և շրջ.:

³ Տէ՛ս ՀՊԹ, *Դավիթ Անանուն, Մարդասիրական ընկերութիւն...*, էջ 35:

⁴ «Արձագանք», 28 փետրվարի, 1888, № 7, էջ. 81:

⁵ Տէ՛ս նույն տեղում, 6 փետրվարի, 1899, № 23:

ներկայացնում է «Նոր-Դար»-ի հողվածագիր բժ. Արամյանը, դրան դրական ընթացք չի տրվում: Բանն այն է, որ Կովկասում նախատեսվում էր զորակոչ, որի ժամանակ կրթական ցենզ ունեցողներն օգտվելու էին որոշակի արտոնություններից: Նրանց համար սահմանվում էր ավելի կարճատև պարտադիր ծառայության ժամկետ: Աջակցելով ծխական ուսումնարաններին, որտեղ սովորում էին նաև գյուղացիների զավակներ, ընկերությունն այդ կերպ օգնում էր թեթևացնել գյուղացիների տնտեսական դրությունը, ինչը գյուղացու համար կարևոր օգնությունն էր: Մարդասիրականի վերը նշված ընդհանուր ժողովում կարևորվել է նաև այդ ուսումնարանների գոյության ապահովման համար պատրաստված ուսուցիչներ ունենալու հարցը¹: Ժողովի որոշմամբ դրամական օգնության է հատկացվում Նախիջևանի, Ղուբայի, Թարգմանչաց վանքի և Սուլթան Նուխիի ծխական ուսումնարաններին: Մերժվում է Շամախիի ուսումնարանին գումար հատկացնելու առաջարկը²:

Ընկերության 1890 թ. դեկտեմբերի 19-ի ժողովում ներկայացվում է Ն. Աբեյանցի, Ա. Կաճկաճյանցի, Յ. Ղուկասյանցի և Ա. Գալստյանցի կազմած թեմական դպրոցի համառոտ նախագիծը: Նախատեսվում էր, որ սկզբում դպրոցը պետք է բաղկացած լինի չորս հիմնական դասարաններից և նախապատրաստական երեք բաժանումունքներից: Առաջին տարում դպրոցը պետք է ունենար մեկ նախապատրաստական՝ երեք բաժանումունքներով և երեք հիմնական դասարաններ: Դասավանդվող առարկաները լինելու էին առաջնային (հայոց լեզու, կրոն, ռուսերեն, ֆրանսերեն, մաթեմատիկա, հայոց պատմություն, Հայաստանի աշխարհագրություն, Ռուսաստանի պատմություն՝ իր աշխարհագրությամբ, ընդհանուր պատմություն, ընդհանուր աշխարհագրություն, բնական պատմություն) և երկրորդական (նկարչություն, վայելչագրություն և երգեցողություն): Թեմական դպրոցի տարեկան ուսումնական ծախսերը կազմելու էին 9090 ռ., իսկ մնացած անհրաժեշտ պետքերի հետ միասին՝ 10 000 ռ.³: 1891 թ. ապրիլի 5-ին քննարկելով այն հարցը, թե ո՞վ պետք է ներկայացնի թեմական դպրոցի բացման հարցը՝ Բաբվի հասարակությունը՝ թե՞ ընկերության խորհուրդը, ի վերջո, որոշվում է դիմումն ուղարկել ընկերության խորհրդի կողմից⁴:

Ընկերության 1890 թ. ապրիլի 29-ին կայացած հերթական ժողովում քննարկվում է ուսումնարանական հարցը: Մտահոգող հանգամանքն այն էր, որ, չնայած երկսեռ ուսումնարանների համար ծախսվում էր տարեկան 10 000 ռ. գումար, այն բավարար արդյունք չէր տալիս: Անդրադարձ է կատարվում նաև նորակառույց շենքում Շամախիի թեմի համար բացվելիք կենտրոնական ուսումնարանին: Դարձյալ արձանագրվում է, որ ընկերության հետ վերջինիս վարչության հարաբերությունները պետք է լինեն համագործակցային: Որոշվում է, որ ուսումնարանի վարչությունը կազմող հոգաբարձության անդամների կեսն ընտրվեն ընկերության խորհրդի անդամներից, մյուս կեսը՝ ժողովրդից⁵:

1891 թ. «Մշակ» թերթում մանրամասներ է ներկայացվում Մարդասիրական ընկերության ընդհանուր ժողովից, մասնավորապես կապված Բաբվում թեմական դպրոց ունենալու կարևորության և նպատակահարմարության խնդրի հետ: Ժողովի մասնակիցները դրան կողմ են արտահայտվել և տարբերակներ որոնել խնդրի իրագործման համար⁶: Դրան հակառակ, 1894 թ. հունվարին Նույն թերթում տպագրված անստորագիր հողվածը Մարդասիրականին մեղադրում է Բաբվի դպրոցին 3000 ռուբլի, մինչդեռ այլ դպրոցներին միայն 100-200 ռուբլի հատկացնելու համար: Հողվածագրի կարծիքով ընկերությունը միայն գումարներ է կուտակում և չի ցանկանում ծախսել⁷: Քննադատությունն, անշուշտ, կապված էր 1894 թ. հունվարի 29-ին ընկերության տարեկան ընդհանուր ժողովում հրապարակված

¹ Տե՛ս «Նոր-Դար», 7 փետրվարի, 1885, № 17:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 38, թ. 2-ի շրջ. և 3:

⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 3 և շրջ.:

⁵ Տե՛ս նույն տեղում, թ. 1 և շրջ.:

⁶ Տե՛ս «Մշակ», 2 փետրվարի, 1891, № 13:

⁷ Տե՛ս նույն տեղում, 27 հունվարի, 1894, № 10:

այն փաստի հետ, որ հաշվետու տարում ընկերությունը 13 դպրոցների համար ծախսել է 4695 ռուբլի, որից 3000 ռուբլի հատկացվել է Բաբվի դպրոցներին: Ստացվում է, որ մյուսներին միջին հաշվով բաժին է հասել տարեկան ընդամենը 140-150 ռուբլի: Բավարար թվով ցանկացողներ չլինելու պատճառով լիովին չէր ծախսվել նաև ուսուցչական ցենզ ստանալու համար հատկացված 600 ռուբլին: Ի վերջո, խորհուրդը որոշել է հաջորդ տարվանից 200 ռուբլով նվազեցնել Բաբվի դպրոցներին տրվող գումարը՝ հուսալով, որ դպրոցների հոգաբարձությունը այլ տարբերակ կգտնի դրանց ֆինանսավորման համար¹:

Սեփական բյուջեից բացի ընկերությունը կիրառում էր կարոտյալներին օգնելու նաև այլ տարբերակներ: Օրինակ՝ Մարդասիրականին ի պահ են տրվել գումարներ, որոնցից ստացված տոկոսները հատկացվել են համապատասխան դպրոցներին: Ըստ որում՝ իրեն պահ տրված գումարներից տոկոս ստանալու համար ընկերությունը դրանք սովորաբար ավելի բարձր տոկոսներով տրամադրում էր մասնավոր անձանց, այլ ոչ թե վարկային կազմակերպություններին: 1896 թ. հայկական դպրոցների փակումից հետո այդ գումարները վերադարձվեցին կամ իրենց տերերին, կամ հոգևոր իշխանություններին²: Մարդասիրականին գումարներ ի պահ թողնելը ընկերության հեղինակության և նրա հանդեպ վստահության աստիճանի մասին խոսում փաստ էր: Խոսքը ոչ միայն փոքր գումարների, այլև հազարավոր ռուբլիների մասին է: Օրինակ՝ Ստեփան Թաթոսյանը 1895 թ. Մարդասիրականին է հանձնել 10 000 ռուբլի՝ պատվիրելով այն հասցնել մինչև 20 000 ռուբլու, որի տոկոսներով պետք է հոգային Գիրք գյուղի դպրոցի ծախսերը: Դպրոցների փակումից հետո՝ 1898 թ. այդ գումարն անցել է ուսումնարանական վարչության տնօրինությանը: Միայն 1905 թ. ծխական դպրոցների վերաբացումից հետո այդ գումարը վերադարձվեց Մարդասիրականին:

Բերենք նման օրինակներ: Արցախի թեմական վերատեսուչ Յ. Գրիգորիչը³ 1881 թ. փետրվարի 26-ին Մարդասիրական ընկերությանն է ուղարկում Վարդաշեն գյուղի հանգանակությամբ հավաքած 1300 ռ. գումարը և խնդրում դրա տոկոսներն ամեն տարի Նուխիի Հայոց հոգևոր վարչության միջոցով հասցնել Վարդաշենի հոգաբարձությանը: Եթե Վարդաշենի դպրոցն ավելի նպաստավոր պայմաններով տոկոսներն ավելացնելու տարբերակներ գտներ, ընկերությունն իր հայեցողությամբ կարող էր ուղարկել կամ ոչ⁴: Յ. Գրիգորիչը 1881 թ. փետրվարի 26-ի վերը նշված նամակով ընկերությանը նաև խնդրում էր Մարգարե Տեր-Ոսկանյանցի կողմից Ղարաբաղի դպրոցին պայմանով նվիրաբերած 1000 ռ. արծաթ գումարը պահպանել Վարդաշենի դպրոցի գումարի նման: Այդ գումարի տոկոսներն ամեն տարի հանձնվելու էին Շուշիի թեմական դպրոցի վերատեսչին կամ վիճակի առաջնորդին Հաղրութ գյուղի հոգաբարձությանը հասցնելու համար: Ըստ որում, եթե Հաղրութի հոգաբարձությունը պահանջեր մայր գումարը, ընկերությունը պարտավոր էր անմիջապես ուղարկել⁵: Ընկերությունը սիրով ընդունում է նշված պայմանները և համապատասխան գրությամբ հավաստում այդ մասին⁶: Որոշ ժամանակ անց Հաղրութի հոգաբարձությունը ընկերությանը խնդրեց ուղարկել նշյալ գումարի կուտակված տոկոսները, քանի որ ցանկանում էր հոգևոր դպրոցից բացի նաև օրիորդաց դպրոց բացել⁷:

1881 թ. փետրվարի 28-ին ընկերության ատենադպիր Մ. Պոպովյանցը նամակ է հղում Շամախիի թեմականն առաջնորդ Թադեոս Եպիսկոպոսին՝ դրա հետ ուղարկելով նաև Մադ-

¹ Տե՛ս նույն տեղում, 3 փետրվարի, 1894, № 13:

² Տե՛ս ՀՊԹ, Դավիթ Անանուն, Մարդասիրական ընկերություն..., էջ 44:

³ Ծանոթ. Տարբեր վավերագրերում Արցախի թեմական սույն վերատեսուչն անվանվում է նաև Յ. Տեր Գրիգորիչ և Յ. Գրիգորի անվանաձևերով: Նպաստակահարմար ենք գտել բոլոր դեպքում գործածել Յ. Գրիգորիչ տարբերակը:

⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 23, թ. 20:

⁵ Տե՛ս նույն տեղում, թ. 13 և շրջ.:

⁶ Տե՛ս նույն տեղում, թ. 46 և շրջ.:

⁷ Տե՛ս նույն տեղում, գ. 35, թ. 109 և շրջ.:

րասա գյուղի հայկական դպրոցին հասանելի 60 ռ. նպաստադրամը և խնդրում այն հասցնել դպրոցի հոգաբարձությանը¹: 1881 թ. ընկերությունը դրամական աջակցություն է ցուցաբերել նաև Վարդաշենի դպրոցին²:

Չեռաբրբություն է ներկայացնում Ռուսաստանին նոր միացված Կարսի և Բաթումի մարզերի հոգևոր առաջնորդ Աղվան եպիսկոպոսի և Կարսի երկսեռ դպրոցների տեսուչ Ալեքսանդր Ղատառյանցի ընկերությանը հասցեագրված 1881 թ. նամակը, որում նրանք խնդրում էին «շնորհ անեք մի կարեկցական ակնարկ էլ իւր վերայ դարձուցանել, ինչպես արել էք և անում էք անդադար Ձեզ դիմողներին անխնայողաբար»: Մարդասիրականից դրամական աջակցություն խնդրելով՝ նրանք հայտնում էին, որ հատկացվելիք գումարի տոկոսներով պատրաստվում են իրենց ուսումնարաններում պահել աղքատ աշակերտների: Մեզ անհայտ հիմնավորմամբ այդ դիմումին տրվել է բացասական պատասխան³:

Երբ ընկերությունը հնարավորություն չէր ունենում բավարարելու բոլոր խնդրատուներին, Բաբվում կազմակերպում էր կամավոր նվիրատվություններ և ստացված գումարներով աջակցում նրանց⁴: Հասարակությունից նյութական օգնություն ստանալու համար ընկերությունը 1882 թ. մարտի 22-ին դիմում է «Արձագանք»-ի խմբագրությանը՝ խնդրելով բացել ստորագրություն և ստացված նվիրատվություններն ուղարկել խորհրդական ժողովին: Նշելով ընկերության սուղ հնարավորությունները, խորհրդական ժողովը դիմում է հայ հասարակությանը՝ վստահ լինելով, որ ազգային կրթության և լուսավորության գաղափարի համակիրները կաջակցեն նվիրատվությունների հարցում⁵:

1882 թ. օգոստոսի 10-ին Մարդասիրականին են դիմում նաև Ամիրվան գյուղի գյուղացիները՝ խնդրելով, որ ընկերությունը չանտեսի իրենց 120 տնից բաղկացած փոքրիկ գյուղը և օգնի կրթել անուսում երեխաներին⁶:

Արցախի թեմական վերատեսուչ Յ. Գրիգորիչը 1882 թ. հունվարի 22-ին ընկերությանը գրած նամակում անդրադառնում է Վարդաշենի դպրոցին և նշում, որ այն ունի տարրական դպրոցների համար նախատեսված ծրագրով սովորող 58 աշակերտ: Դրան հավելում է, որ երկրորդ ուսուցիչ չունենալու պատճառով գյուղի ևս 15-20 երեխաներ սովորում են այլ դպրոցներում: Այդ խնդիրը կարգավորելու համար Յ. Գրիգորիչը Մարդասիրական ընկերությանը խնդրում էր դպրոցի նպաստն ավելացնել 300-400 ռուբլով: Նա խնդրում էր հնարավորինս շուտ ուղարկել 200 ռ.՝ այդ տարվա համար նախատեսված գումարի կեսը և ընկերությանն ի պահ տրված 1500 ռ. (իրականում պետք է լիներ 1300) տոկոսները: Նամակագիրը նաև փաստում էր, որ առանց Մարդասիրականի աջակցության դպրոցը վաղուց փակված կլիներ⁷:

Նույն թվականի նոյեմբերի 10-ին Յ. Գրիգորիչը նոր տեղեկություններ է հաղորդում Վարդաշենի հոգևոր դպրոցի մասին: Ըստ դրա դպրոցն ուներ 63 աշակերտ, որոնցից 8-ը աղջիկներ: Աշակերտները բաշխված էին երկու դասարաններում: Շարունակվող ընդունելության պայմաններում նրանց թիվը կարող էր հասնել 80-ից 90-ի: Ուսուցիչներն իրենց գործը բարեխղճությամբ էին կատարում, բայց նրանց աշխատավարձը ցածր էր: Թեմական վերատեսուչը Մարդասիրականից խնդրում էր դպրոցին հատկացնել ևս 100 ռ.⁸:

Նպաստ ստանալու խնդրանքով 1881-1882 թթ. Մարդասիրական ընկերությանը դիմել են Գանձակի դպրոցների խնամակալ Ներսես Տեր-Ներսեսյանը՝ 400 ռ.⁹, Արցախի թեմա-

¹ Տե՛ս նույն տեղում, գ. 23, թ. 14:

² Տե՛ս նույն տեղում, թ. 20:

³ Նույն տեղում, թ. 92 և շրջ., 93:

⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 24, թ. 43, 44:

⁵ Տե՛ս նույն տեղում, թ. 56 և շրջ., 57:

⁶ Տե՛ս նույն տեղում, թ. 232 և շրջ., 233:

⁷ Տե՛ս նույն տեղում, թ. 3 և շրջ.:

⁸ Տե՛ս նույն տեղում, թ. 302 և շրջ.:

⁹ Տե՛ս նույն տեղում, թ. 1 և շրջ. և 2:

կան վերատեսուչ Յ. Գրիգորինչը Հաղորդ գյուղի համար (նա խնդրում էր ուղարկել ընկերությանն ի պահ տրված 1000 ռուբլու մեկ տարվա տոկոսները)¹, Սադիան գյուղի հոգաբարձության նախագահ քահանա Հարություն Սարգսյանցը, հոգաբարձուներ Հակոբ Սահակովը և Մկրտիչ Աթաբեգյանցը՝ առանց գումարի որոշակի չափ նշելու²:

Ընկերությունն իր հերթին հետևողականորեն գրություններ է ուղարկել նպաստառուներին՝ ցանկանալով վստահանալ, որ իր ուղարկած գումարները հասել են հասցեատերերին և ստացել դրական պատասխաններ: Հիշատակենք դրանցից մի քանիսը: 1881 թ. նոյեմբերի 3-ի գրությամբ Քիլվարի հոգևոր դպրոցի հոգաբարձությունը հավաստում էր, որ ստացել է դպրոցի ուսուցիչների ինն ամսվա վարձը կազմող 225 ռ. գումարը³: Ղուբայի Խաչմազ գյուղի ծխական դպրոցի հոգաբարձու Ահարոն Ղասաբյանցն իր հերթին հավաստում էր 50 ռ. նպաստադրամի ստանալը⁴: 1882 թ. ընկերությունը ստացել է հավաստումներ Քիլվար գյուղի դպրոցին հասանելիք տարեկան գումարի մեկ երրորդի՝ 100 ռ.⁵, Մադրասայի հայոց ծխական դպրոցի համար հոգաբարձության սահմանած տարեկան 60 ռ. նպաստադրամի⁶, Հաղորդի դպրոցի համար ի պահ տրված 1000 ռ. գումարի 10 ամսվա կուտակված 108 ռ. տոկոսի⁷ և այլ գումարների ստացման մասին:

Ընկերության 1888 թ. հունվարի 30-ին կայացած նիստում, ի թիվս այլոց, քննարկվում է Ս. Թարգմանչաց վանքի ուսումնարանի համար ևս 100 ռ. հատկացնելու հարցը: Բայց պարզվում է, որ այն դեռ չի բացվել: Գրիգոր Թումայանցը հանձն է առնում իր միջոցներից տարեկան 100 ռ. նվիրել Թարգմանչաց վանքին՝ պայմանով, որ այդ գումարն ընկերության միջոցով հանձնեն նոր բացվող ուսումնարանին: Դրանով հանդերձ, որոշվում է, այսուհետ մերժել այն խնդրատուներին, որոնք, թեմի տարածքից դուրս լինելով, գերծ են մնում ընկերության ուշադրությունից և վերջինս ի գորու չի լինում հարկ եղածի պես վերահսկել իր ուղարկած գումարների նպատակային գործադրության վրա⁸:

«Արձագանք»-ի վկայությամբ՝ նույն նիստում նաև որոշվում է շարունակել աջակցել Ղուբա գավառի Խաչմազ և Քիլվար գյուղերի դպրոցներին: Իսկ ընկերության գանձապետ Գրիգոր Դիլդարյանցը հայտնում է, որ Բեգլարբենդ գյուղում իր գնած տունը նվիրում է Մարդասիրական ընկերությանը՝ նույն գյուղի ուսումնարանն այնտեղ տեղափոխելու համար⁹: 1890 թ. հունիսի 3-ին Պետրոս Տեր-Մարկոսյանցը հայտնում է ժողովին, որ Բեգլարբենդի ուսումնարանի համար Գ. Դիլդարյանցի խոստացած տունն արդեն գնված է և շուտով կհանձնվի խորհրդի տնօրինությանը¹⁰:

Ուշագրավ է, որ Մարդասիրական ընկերությունից օգնություն են խնդրել նաև Երևանի նահանգից: 1889 թ. Էջմիածնի գավառի Գեչրլու գյուղի բնակիչները Սահակ վարդապետի մասնակցությամբ գյուղի եկեղեցական-ծխական ուսումնարանի հոգաբարձության միջոցով դիմում են ընկերության խորհրդին՝ իրենց ուսումնարանի պահպանության համար 300 ռ. նպաստ ուղարկելու խնդրանքով¹¹:

Մարդասիրականը հետևողականորեն տեղեկատվություն էր ստանում իր հովանավորության տակ գտնվող դպրոցներից, որպեսզի վստահ լիներ, որ իր տրամադրած նպաստները տեղին են օգտագործվում: Օրինակ՝ Նուխիի առաջնորդ Խ. վարդապետ Գրիգորին 1889 թ. նոյեմբերի 16-ին տեղեկություններ է հաղորդում Վարդաշենի, Սուլթան-Նուխիի,

¹ Տե՛ս նույն տեղում, թ. 5:

² Տե՛ս նույն տեղում, թ. 45 և շրջ., 46 և շրջ.:

³ Տե՛ս նույն տեղում, գ. 23, թ. 152:

⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 23:

⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 24, թ. 49:

⁶ Տե՛ս նույն տեղում, թ. 47:

⁷ Տե՛ս նույն տեղում, թ. 103 և շրջ., 104:

⁸ Տե՛ս «Նոր-Դար», 11 փետրվարի, 1888, № 16:

⁹ Տե՛ս «Արձագանք», 7 փետրվարի, 1888, № 4, էջ 45:

¹⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 38, թ. 2:

¹¹ Տե՛ս նույն տեղում, գ. 35, թ. 168:

Ամրուանի և Բեգլարբենդի դպրոցների ուսուցիչների և աշակերտական կազմի մասին, միաժամանակ խնդրելով ուղարկել այդ տարվա համար նախատեսված նպաստի երկրորդ կեսը¹:

Շամախիի Սուրբ Սանդուխտյան վարժարանի հոգաբարձու Յովհաննես Խլաֆը հայտնում էր, որ ուսումնարանը բաղկացած է երկու դասարաններից և գործում է չորս բաժանմունքով: Նշվում էր նաև վարժուհու և ուսուցչի աշխատավարձի չափը՝ 750 ռ. և այլն²: 1889 թ. թվագրվող մեկ այլ գրությամբ էլ ներկայացվել է վարժարանի ուսուցչական կազմը³:

Ղուբայի ծխական հոգևոր դպրոցի հոգաբարձու Ավագ քահանա Ավգարյանցը 1889 թ. դեկտեմբերին ընկերությանը հայտնում է, որ իրենց դպրոցը երկսեռ է՝ բաղկացած 65 աշակերտներից և 26 աշակերտուհիներից: Ունեն ընդհանուր երեք վարժապետ և մեկ վարժուհի⁴: Նույն թվականին Ղուբայի եկեղեցական-ծխական ուսումնարանի մասին ընկերությանը տեղեկություններ են հաղորդում նաև ուսումնարանի հոգաբարձուները, նշելով, որ դպրոցը երկսեռ է, բաղկացած երեք տղաների և մեկ աղջիկների բաժանմունքներից, ունեն 58 աշակերտ և 13 աշակերտուհի: Դպրոցների տարեկան ծախսը կազմել է մոտավորապես 2000 ռ.⁵:

1889 թ. Արցախի թեմի Չայոց հոգևոր դպրոցի հոգաբարձու երեցփոխ Գրիգոր Չարգարյանը և անդամները Իսահակյանցն ու Տեր-Ոսկանյանցը դիմում են Մարդասիրական ընկերությանը, նշելով, որ Չաղրուֆի օրիորդական դպրոցը դրամական աջակցության կարիք ունի⁶: «Արդ յունվար ամիսը մօտ լինելով, — ասված էր խնդրագրում, — խոնարհաբար խնդրում ենք ի նկատի ունենալ մեր սոյն խնդիրն և բավարարութիւն շնորհեք այս խնդրագրին, որին սպասում և հաւաստիացած ենք, որովհետև նրանից է կախուած բացել և չբացել օրիորդաց վարժարան»⁷: Ընկերությունը մերժել է այդ դիմումը, հիմնավորելով, որ Նոր դպրոցներին օգնություն հատկացնելու որոշումները կայացվում են տարին մեկ անգամ հրավիրվող ընդհանուր ժողովում՝ նախապես ներկայացված հայտերի հիման վրա:

Իրենց Նորաբաց միդասյան դպրոցի համար 1894 թ. փետրվարի 25-ին Մարդասիրական ընկերությունից տարեկան 100 ռ. են խնդրում ճալեթ գյուղի բնակիչները: Ընկերության խորհուրդը որոշում է գումարը հատկացնել միայն դպրոցի բացման մասին պաշտոնական տեղեկություն ստանալուց հետո⁸:

Մարդասիրական ընկերությունը որոշակի աջակցություն է ցույց տվել նաև Թիֆլիսի Ներսիսյան հոգևոր դպրոցին: Դա երևում է վերջինիս հոգաբարձության կողմից 1897 թ. հունիսի 13-ին ընկերությանը հղած հավաստագրից, որ ստացել է իր համար նախատեսված տարեկան 300 ռուբլի գումարի կեսը⁹: Անշուշտ, կարող է առաջանալ այն բնական հարցադրումը, թե ընկերությունն ինչու էր նպաստ հատկացնում այն քաղաքի դպրոցին, որտեղ գործում էր ավելի զորեղ Կովկասի Չայոց բարեգործական ընկերությունը:

ժամանակի մամուլում հաճախ է հնչել այն տեսակետը, որ ընկերությունը նման փոքր գումարներով չէր կարող իրական աջակցություն ցույց տալ կրթօջախներին և ճիշտ կլիներ, որ Մարդասիրականն այդ գումարները մի վայրում ներդներ: Մինչդեռ եղած վավերագրերը վկայում են, որ հաճախ խնդրատուներն են ընկերությունից այդչափ գումարներ խնդրել՝ նախապես հաշվարկելով իրենց առաջնային կարիքները: Այդ մասին են վկայում նաև այն բազ-

¹ Տե՛ս նույն տեղում:

² Տե՛ս նույն տեղում, թ. 173:

³ Տե՛ս նույն տեղում, թ. 21:

⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 174 և շրջ.:

⁵ Տե՛ս նույն տեղում, թ. 20:

⁶ Տե՛ս նույն տեղում, թ. 178:

⁷ Տե՛ս նույն տեղում, թ. 174 և շրջ.:

⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 38, թ. 4 և շրջ.:

⁹ Տե՛ս նույն տեղում, գ. 44, թ. 7:

մաթիվ շնորհակալագրերը, որոնք ընկերությունը ստացել է Վարդաշենից, Շուշիից՝ Հաղրուբ գյուղի համար¹, Ղուբայից, Շամախիի Սուրբ Սանդուխտյան վարժարանից, Նուխիի փոխանորդ առաջնորդից² և այլն:

1875-1896 թթ. Մարդասիրական ընկերությունն աջակցել է Զիլվարի, Խաչմազի, Մադրասայի, Վարդաշենի, Ս. Թարգմանչաց, Ամրուանի, Սուլթան-Նուխիի, Ղուբայի երկսեռ, Շամախիի օրիորդաց, Բեգլարբենդի, Գիրբի, Ղալագեայի, Մեծսարիի, Ախալբալաքի, Գանձակ գյուղի, Չարգարյանի, ճալթի, Գետաբեկի, Իդելեցիքի, Վերին-Ազայի, Գյառգյառի, Հաղրուբի և Նիժի դպրոցներին, որոնց համար ընկերության միջոցներից ծախսվել է մոտ 20 000 ռուբլի³:

Դրամական աջակցությունից զատ ընկերությունը հետաքրքրվում էր նաև դպրոցական կյանքի առօրյայով և նամակագրություն էր պահպանում թեմական տեսուչների հետ: Նրանցից ստացված տեղեկատվությունը, սակայն, չէր բավարարում Մարդասիրականին: Այդ պատճառով որոշում են ունենալ վստահելի անձ, որը շրջելով Բաքվի նահանգի դպրոցներով, պետք է անհրաժեշտ տեղեկություններ հաղորդեր ընկերությանը և հարկ եղած դեպքում ցուցումներ տար ուսուցիչներին: Դրա վերաբերյալ որոշում է կայացվում 1881 թ. ապրիլին, բայց հարցը պաշտոնապես լուծում չի ստանում և անկատար է մնում համապատասխան անձի բացակայության պատճառով: Դրված խնդիրը կյանքի կոչելու գործում կարևոր դեր են խաղում ընկերության երախտավորներ Ներսես Սարումյանը և Բեգլար Ստեփանյանը: Նրանք այցելելով դպրոցներ, Մարդասիրականի խորհրդին տեղյակ են պահել իրենց նկատած ձեռքբերումների և թերությունների մասին:

Բ. Ստեփանյանի դիտարկումներով Շամախիի և Ղուբայի դպրոցները բավարար վիճակում էին, բայց թաթախոս գյուղերի դպրոցների վիճակը ծանր էր: Նրա ներկայացմամբ թաթախոս Զիլվարի դպրոցում, որի ուսուցիչը գյուղի քահանան էր, սովորում էր 20 աշակերտ: Ուսուցիչը աշակերտների համար կարդացած նյութը թարգմանում էր թաթերեն, հետո հայերեն: Խաչմազի դպրոցն ուներ 13 աշակերտ, որոնք շատ էին բացակայում և վատ սովորում: Գիտեին միայն մի քանի աղոթք, բայց իմաստը չէին հասկանում: Չնայած նշված դպրոցների վիճակն անմխիթար էր, բայց այդ մոռացված վայրերում ընկերության հիմնած դպրոցները միակ կրթական հաստատություններն էին⁴:

Շամախիի դպրոցներն առավել մեծ ուշադրության արժանացան սկսած 1893 թ.: Թեմական տեսուչ Եղիշե Գեղամյանի շնորհիվ մի քանի դպրոցներ ստեղծեցին իրենց առանձին ֆոնդերը: Դրանք ի պահ էին տրվել Մարդասիրականի ընկերությանը:

1880-ական թթ. սկզբին հայկական դպրոցները կանգնեցին փակման վտանգի առաջ: Ցարական իշխանությունները ոչ միայն չէին աջակցում, այլև խոչընդոտում էին հայկական դպրոցի զարգացմանը: Նրանք անթույլատրելի էին համարում, որ հայոց հոգևոր իշխանությունը ծխական դպրոցներից բացի վերահսկողություն ուներ նաև մասնավոր անձանց կողմից բացված դպրոցների վրա, որոնք պետք է ենթարկվեին պետական ուսումնարանական վարչությանը⁵: Նման իրավիճակում կանգնելով երկրնտրանքի առջև, Մարդասիրական ընկերության խորհուրդը ուսումնարանական վարչության փոխարեն նախապատվություն էր տվել հոգևոր իշխանություններին, մասնավոր որ վերջիններս նյութական և բարոյական առումներով գործուն մասնակցություն էին ունեցել դպրոցների պահպանության գործին: Խնդիրը քննարկման էր դրել Մարդասիրականի խորհրդի անդամ Սարգիս Վարչամյանը: Նա փաստում էր, որ եթե նախկինում Բաքվի հասարակությունը չէր ընկալում կրթության դերը, ապա նոր պայմաններում լավ գիտակցում էր դրա նշանակությունը: Ս. Վարչամյանը ճիշտ էր համարում ուշադրությունը գյուղերի վրա սևեռելը: Ընկերության

¹ Տե՛ս նույն տեղում, գ. 24, թ. 52, 129 և շրջ.:

² Տե՛ս նույն տեղում, գ. 35, թ. 27-29:

³ Տե՛ս ՀՊԹ, Դավիթ Անանուն, Մարդասիրական ընկերություն..., էջ 43-44:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 46:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 28:

խորհուրդը սկզբում միանշանակ չէր վերաբերվում հարցին և չէր ցանկանում հրաժարվել քաղաքի դպրոցներից: Բայց այս հարցում որոշիչ դեր է ունենում ոստիկանության 1885 թ. մարտի 4-ի կարգադրությունը, որի համաձայն փակվում էին Բաքվի հայոց երկսեռ դպրոցները: Մարտի 5-ին Բաքվի ոստիկանապետը հատուկ գրություն է ուղարկում Մարդասիրական ընկերությանը, որով, ըստ էության, առաջարկում էր ուսումնարանները պահպանել որպես հասարակական դպրոցներ՝ ուսումնարանական վարչության ենթակայության ներքո: Այդ գրության համաձայն, ծխական-եկեղեցական դպրոցները դադարում էին գործել, եթե հասարակական չէին դառնում¹: Մարդասիրական ընկերության խորհուրդը՝ խորհրդակցելով Սինոդի և Շամախիի թեմի առաջնորդ Թադևոս եպիսկոպոսի հետ, որոշում են մինչև նոր կարծողիկոսի գահ բարձրանալը դպրոցները թողնել փակ:

1886 թ. սեպտեմբերից հայոց եկեղեցական-ծխական դպրոցները, այդ թվում նաև Բաքվի երկսեռ դպրոցները վերաբացվեցին, բայց արդեն ծխական հոգաբարձության իշխանության ներքո: Նոր իրավիճակում Մարդասիրականը դառնում է լոկ որպես նյութապես աջակցող հիմնարկություն: Դպրոցների ծխական հոգաբարձության ներքո գտնվելու ընթացքում ընկերության արխիվային փաստաթղթերում դրանց վերաբերյալ շատ քիչ տեղեկություններ կան: Մարդասիրականը ֆինանսապես աջակցում էր միայն այն գյուղերին, որոնք ի զորու չէին սեփական միջոցներով դպրոցներ ունենալ: Բայց ընկերությունը չէր հոգում դրանց ամբողջ ծախսերը, այլ օգնում էր մասնակիորեն, երբեմն տրամադրելով չնչին գումար՝ ձգտելով հասնել այն բանին, որ գյուղացիները գոնե լուծեն դպրոցի համար շենք հատկացնելու հարցը:

1890-1894 թթ. Մարդասիրականը զբաղված էր թեմական դպրոց բացելու հարցով: Այդ նպատակով ստեղծվեց հանձնաժողով՝ Ներսես Աբեյանցի, Աստվածատուր Կաճկաճյանցի, Հայրապետ Ղուկասյանցի և Աստվածատուր Գալստյանցի մասնակցությամբ: Նրանք կազմեցին բացվելիք դպրոցի ծրագիրը: Ենթադրվում էր, որ այն պետք է ունենար երեք նախակրթարան և չորս հիմնական դասարան: Խնդրին արագ լուծում տալու ակնկալիքով ընկերության խորհուրդն իր նախաձեռնությամբ 1891 թ. ապրիլին դիմում է Շամախիի թեմակալ առաջնորդին: Բայց հարցն այդպես էլ լուծում չի ստանում: Ավելին, փակվում են նաև թերի ուսումնարանները: Նման իրավիճակը շարունակվում է մինչև 1896 թ.՝ հայկական դպրոցների երկրորդ փակումը, որը խեղդեց մեծ ջանքերով և զոհողություններով ստեղծված կրթօջախների ծաղկումը:

Մարդասիրական ընկերության 1897 թ. հաշվետու ժողովում կատարված ծախսերի մեջ դպրոցներին հատկացված օգնության մասին ոչինչ չի ասվում²: Բայց նույն թվականի հաշվետվության վերջում՝ 1898 թ. նախահաշվում որոշակի գումարներ են հատկացված Բաքվի ռեալական դպրոցի, արական գիմնազիոնի, տեխնիկական դպրոցի, ինչպես նաև Շուշիի թեմական դպրոցի աղքատ աշակերտների համար³:

Մարդասիրական ընկերության կրթական գործունեության կարևոր քայլերից մեկն էլ իշխանությունների համաձայնությամբ կիրակնօրյա դպրոցի բացումն էր, որի նպատակը հայ ժողովրդի անգրագետ դասին կրթելը, նրա մտավոր և բարոյական զարգացմանը աջակցելն էր: Դպրոցը բացվում է Մ. Արամյանցի տեսչությամբ, բայց ուսուցիչների և աշակերտների պակասի պատճառով նրա գործունեությունը երկար չի շարունակվում:

Մյուս կարևոր ձեռնարկը կար ու ձևի դպրոց բացելու փորձն էր: Դեռևս 1891 թ. Բաքվում մի խումբ հայ կանայք ջանում էին հիմնել «Հայուհեաց բարեգործական ընկերութիւն», որի համար նրանք անգամ 15 հազար ռուբլի գումար ունեին, որը պահպանելու համար տրվել էր Մարդասիրականին: Ի զորու չլինելով սեփական ուժերով լուծելու խնդիրը, նրանք

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 29-30:

² Տե՛ս «Աշակ», 6 փետրվարի, 1897, № 15:

³ Տե՛ս ՀԱՇԻԻ բարձրագոյնս հաստատեալ Մարդասիրական ընկերութեան յանուն ս. Գրիգոր Լուսավորչին Հայաստանի, վասն 1897 թ., Բագու, 1898, ԱՄԽԱՀԱՇԻԻ ԲԱՐՁՐԱԳՈՅՆՍ հաստատեալ Մարդասիրական ընկերութեան յանուն Ս. ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՉԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ վասն 1898 թ., Բագու, 1898, էջ 2:

որոշում են համագործակցել Մարդասիրականի հետ և հանդես գալ վերջինիս հովանավորությամբ: Հաշվի առնելով, որ Բաբվի օրհորդաց դպրոցն իր սահմանափակ կարգավիճակով չի բավարարում տեղի չբավոր հայ աղջիկների ամօրյա պահանջները, Մարդասիրականը որոշում է ընդամառել տիկնանց դիմումին:

Ընկերության խորհրդի 1892 թ. արձանագրության մեջ նշվում էր, որ նա ցանկանում է իր հովանավորության ներքո չբավոր աղջիկների համար բացել մի արհեստանոց, որտեղ կսովորեն միայն կար ու ձև, իսկ հարկ եղած դեպքում՝ տնային տնտեսությանն առնչվող այլ արհեստներ: Խորհրդի այս որոշումը կայացվում է Աննաման Մադաթյանի, Սոֆյա Ադամյանի և Եղիսաբեթ Սարգսյանի ներկայությամբ և հավանությամբ¹: Դրանից հետո խորհուրդը դպրոցի բացումը թույլատրելու միջնորդությամբ դիմում է կառավարությանը:

Կովկասի դպրոցական հոգաբարձու Յանովսկին այդ ծրագրի դեմ առաջադրում է իր ծրագիրը: Նա դպրոցի բացումը հնարավոր էր համարում հետևյալ պայմաններով. 1. դպրոց կարող էին ընդունվեն 12 տարեկանից բարձր տարիքի աղջիկներ՝ առանց ազգային և կրոնական խտրականության, 2. դպրոցում ընկերությունը կարող էր ունենալ միայն մեկ հոգաբարձու, 3. ուսումնական ծրագիրը պետք է հաստատվեր Կովկասի կառավարչապետի կողմից, 4. դպրոց կարող էին ընդունվել միայն լուսավորության նախարարությանը ենթակա մի դասյան դպրոց կամ գիմնազիայի առաջին դասարանն ավարտած աղջիկները²: Դնելով նման պայմաններ՝ իշխանությունները քաջատեղյակ էին, որ Մարդասիրականը գործում է միայն հայ ազգի համար և ցանկանում է սովորեցնել միայն ծխական դպրոցն ավարտած հայուհիներին: Բացի այդ, ցավոտ հանգամանք էր, որ դպրոցը չէր գտնվելու Մարդասիրականի տնօրինության ներքո:

Յանովսկուն բացատրեցին, որ նրա առաջադրած պայմանները չեն բխում ընկերության կանոնադրությունից: Նա էլ պատասխանեց, որ այլ կերպ չի կարող թույլատրել դպրոցի բացումը: Այդ ամենի արդյունքում 1893 թ. սեպտեմբերի 20-ի նիստում Մարդասիրականը հրաժարվում է դպրոց բացելու ծրագրից, իսկ հայուհիների 15 հազար ռուբլին մնում է ընկերության տնօրինության ներքո: Այդ գումարի տոկոսները նվիրատուների ցանկությամբ հետագայում օգտագործվում են ճաշարանի կառուցման վրա:

Ի մի բերելով կրթական ոլորտում Մարդասիրական ընկերության ծավալած 32 տարվա գործունեությունը՝ ընդհուպ մինչև 1896 թ., կարող ենք արձանագրել, որ այդ տարիներին ընկերությունը դպրոցների վրա ծախսել է 55 հազար ռուբլի: Բաբվի երկսեռ դպրոցներում 1869-1884 թթ. սովորել են արական դպրոցում՝ 933, իսկ իգական դպրոցում՝ 463 երեխաներ³: Նաև արձանագրենք, որ այդ տարիներին ընկերությունը կառուցել է հատուկ շենքեր, որոնք անվճար հատկացրել է դպրոցներին:

Վերն ասվածին նաև հավելենք, որ Մարդասիրական ընկերությունը մշտապես իր ուշադրության կենտրոնում է պահել Բաբվի դպրոցների կրթական կյանքը՝ և՛ նյութապես, և՛ բարոյապես աջակցելով նրանց: Ճիշտ է, ընկերությունն ի սկզբանե չունենալով լայն հնարավորություններ, ի գորու չէր արժանվույս աջակցություն ցուցաբերել բոլոր կարոտյալներին, որի պատճառով հաճախակի է արժանացել ժամանակի մամուլի քննադատությանը, բայց ինչպես ակնհայտ է վերոշարադրյալ նյութից, նա չի զլացել թեկուզև նվազ միջոցներով օգնել գրեթե բոլոր խնդրատուներին: Մարդասիրականը, ֆինանսական աջակցությունից զատ, հետևողականորեն իր ուշադրության կենտրոնում է պահել կրթական խնդիրները՝ դպրոցների համար կազմելով ուսումնական ծրագրեր, քայլեր ձեռնարկել ուսուցչական կազմի ո-

¹ Տե՛ս Հարությունյան Ա., ԵՐԵՎԵԼԻ ՏԻՎԼԱԼՑ ԴԱՐԸ, Հայ կանանց հասարակական գործունեությունը XIX դարում և XX դարասկզբին, Ե., 2005, էջ 114:

² Տե՛ս ՀԳԹ, Դավիթ Անանուն, Մարդասիրական ընկերութիւն..., էջ 38, նաև՝ Հարությունյան Ա., նշվ. աշխ., էջ 114:

³ Տե՛ս ՀԳԹ, Դավիթ Անանուն, Մարդասիրական ընկերութիւն..., էջ 36:

րակի ապահովման համար և կրթական տարբեր հարցերի վերաբերյալ խնդիրներում հասարակության անունից որպես միջնորդ հանդես եկել ցարական վարչակարգի հետ վարվող բանակցություններում:

Сусанна Аракелян, ОБРАЗОВАТЕЛЬНО-ПРОСВЕТИТЕЛЬСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНСКОГО ГУМАНИТАРНОГО ОБЩЕСТВА БАКУ И СТРОИТЕЛЬСТВО ШКОЛ В 1864-1896.

На основе достоверных архивных документов, материалов периодической печати, ряда документов, опубликованных еще в конце 19 – начале 20 веков, в статье представлена деятельность Бакинского армянского гуманитарного сообщества, охватывающая просветительно-образовательную сферу и строительство школ в течение 32 лет, вплоть до второй попытки царского правительства закрыть армянские национальные школы.

Обстоятельно и детально описана разнообразная помощь, оказанная Гуманитарным сообществом не только Бакинским образовательным учреждениям, но и особенно десяткам сельских школ, в частности: основание и строительство новых школ, регулярная их дотация, участие в разработке учебных программ, а также решение текущих проблем преподавателей школ и т.д. Главной целью Сообщества в содействии деятельности армянских школ было сохранение армянского языка, что в условиях ассимиляционной политики Царской России было очень важно.

Многие из использованных документов вводятся в научный оборот впервые.

Ключевые слова: Бакинское армянское гуманитарное сообщество, образовательная сфера, строительство школ, деятельность, царское правительство, национальные школы, помощь, дотация, учебная программа.

Susanna Arakelyan, EDUCATIONAL AND SCHOOL-BUILDING ACTIVITIES OF ARMENIAN HUMANITARIAN SOCIETY OF BAKU IN 1864-1896.

The article is based on rich archival documents, various materials taken from the periodical press of the time, a number of documents published in the late XIX and early XX centuries, where are presented the educational-illuminative and school-building activities carried out by the Armenian Humanitarian Society of Baku during the first 32 years of the company's activity, until the second attempt by the tsarist authorities with the aim of closing the Armenian national schools.

The article presents in detail the various assistance provided by the Humanitarian Society over the decades, not only in Baku, but also in many schools in other cities in the region, especially in dozens of villages (participation in the establishment of schools, regular financial support, construction of school buildings, participation in the preparation of school curricula, solving various problems related to teaching staff, etc.). The main goal of the company to support Armenian schools was to ensure the preservation of the Armenian language, which was a key issue in the conditions of nationalist policy of Tsarist Russia.

Many of the documents are being put into scientific circulation for the first time.

Key words: Armenian Humanitarian Society of Baku, educational sphere, school-building, activity, tsarist authorities, national schools, assistance, financial support, curricula.